ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012թ. սոցիալ-տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված էր մակրոտնտեսական կայունության ապահովմանը, տնտեսական աճի բարձր տեմպերի պահպանմանը՝ զուգահեռաբար իրականացնելով զարգացմանն ուղղված բարեփոխումները:

2012թ. տնտեսական աճը հանրապետությունում կազմել է 9.9%: Անվանական արտահայտությամբ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 150.0 մլրդ դրամ (2011թ. 135.5 մլրդ դրամ): Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 1023.0 հազ. դրամ կամ 2546.1 ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 936.1 հազ. դրամի կամ 2513.0 ԱՄՆ դոլարի դիմաց:

2012թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 40.9 մլրդ դրամ՝ 2011թ. համեմատ իրական արտահայտությամբ նվազելով 0.8 %-ով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 50.3 մլրդ դրամ՝ 2011թ. համեմատ ապահովելով իրական աճ 23.9 %-ի չափով:

Ֆինանսավորման բոլոր աղբյուրների հաշվին իրականացված կապիտալ շինարարության ծավալը կազմել է 37.9 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 12.6 %-ով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2012թ. կազմել է 349.0 մլն ԱՄՆ դոլար՝ 2011թ. համեմատ նվազելով 11.1 %-ով, ընդ որում ներմուծման ծավալները նվազել են 7.0 %-ով՝ կազմելով 291.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտահանման ծավալները՝ 27.4 %-ով և կազմել են 57.8 մլն ԱՄՆ դոլար:

2012թ. 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը կազմել է 401.79 դրամ (2011թ.՝ 372.49 դրամ), 1 եվրո-ինը՝ 516.38 դրամ (2011թ.՝ 518.74 դրամ):

Հաշվետու տարում մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 105.0 մլրդ դրամ, բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը՝ 17.2 մլրդ դրամ՝ 2011թ. համեմատ աճելով համապատասխանաբար 8.7 և 10.2 %-ով:

Զբաղվածների (վարձու աշխատողների) թվաքանակն ըստ տնտեսության տարբեր ճյուղերի 2012թ. կազմել է 48980 մարդ: Նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 1031 նոր աշխատատեղ:

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2012թ. կազմել է 102777 դրամ, 2011թ. համեմատ անվանական աճը կազմել է 4.4 %:

Տնտեսական աճին և զբաղվածությանը զուգահեռ ավելացել են բնակչության դրամական եկամուտները և ծախսերը: 2012թ. բնակչության դրամական եկամուտները 2011թ. համեմատ ավելացել են 10.8 %-ով՝ կազմելով 125.2 մլրդ դրամ, իսկ դրամական ծախսերը աճել են 11.6 %-ով՝ կազմելով 124.5 մլրդ դրամ:

2013թ. հունվարի 1-ի դրությամբ առևտրային բանկերի վարկային ներդրումները կազմել են 78.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 32.8%-ով, բանկերում բնակչությունից ներգրավված ավանդների գումարը կազմել է 19.8 մլրդ դրամ՝ 2011թ. 13.9 մլրդ դրամի դիմաց (աճը՝ 42.4 %):

Սպառողական գների ինդեքսը 2012թ. նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ կազմել է 103.0 %:

Տնտեսական քաղաքականություն

Նախորդ տարիներին արձանագրված տնտեսական աճի բարձր տեմպերի հետագա ապահովումը շարունակում է մնալ տնտեսական քաղաքականության հիմնական գերակայությունը՝ որպես երկրի կայուն զարգացման կարևորագույն գրավական, որի պարագայում առավել կերաշխավորվի ոչ միայն մեր սերնդի, այլ նաև ապագա սերունդների բարեկեցությունը: Այս առումով տնտեսական քաղաքականությունը, քանակական աճին զուգընթաց, ուղղվում է որակական տնտեսական զարգացման ապահովմանը:

2012 թվականին ԼՂՀ կառավարության իրականացրած տնտեսական քաղաքականությունը նպատակաուղղված էր որակական տնտեսական զարգացման ապահովմանը, տնտեսության և նրա տարբեր ճյուղերի դիվերսիֆիկացման խթանմանը, գործարարությամբ զբաղվելու համար բարենպաստ պայմանների ապահովմանը, գործարարների և սպառողների իրավունքների ու շահերի համակողմանիորեն պաշտպանվածությանը, պետություն-մասնավոր հատված համագործակցության արդյունավետության բարձրացմանը: Տնտեսական զարգացման քաղաքականությունը 2012 թվականին իրականացվել է հետևյալ ռազմավարական ուղղություններով.

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում

Տնտեսական քաղաքականության հիմնական ուղղություններից է գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման ապահովումը՝ նպատակ ունենալով այն դարձնել երկրի մրցակցային առավելություններից մեկը:

ԼՂՀ կառավարության 2011 թվականի մարտի 22-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատվել է Լեռնային Ղարաբաղի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագիրը, որը նպատակաուղղված է գործարարությամբ զբաղվելու հետ առնչվող վարչարարական ընթացակարգերի պարզեցմանը, փոքր և միջին ձեռնարկությունների աճի խթանմանը, հարկային հաշվետվությունների կրճատմանը և պարզեցմանը, հարկ վճարողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Նշված ծրագրի իրականացման նպատակով 2012 թվականին կատարվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված օրենքով պահանջվող հաշվետվությունների ներկայացման կարգի պարզեցմանը, ներկայացվող ձևաթղթերի միասնականացմանը, հարկման դաշտի բարելավմանը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պահանջվող ժամանակի կրճատմանը, ինչպես նաև միասնականացվել են գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման, տեղեկատվության տրամադրման և այլ ծառայությունների համար գանձվող վճարների չափերը, որի ընթացքում հիմնականում նվազել են գործող սակագները և կրճատվել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման ժամկետները:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում

ԼՂՀ կառավարությունը շարունակել է աշխատանքներ իրականացնել ՓՄՁ զարգացման, պետական աջակցության խորացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

ԼՂՀ կառավարության հավանությանն արժանացած՝ փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2012 թվականի ծրագրի իրականացման նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները:

2012 թվականին «ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման» ենթածրագրի շրջանակում՝ Արցախի ներդրումային հիմնադրամի հետ համագործակցող առևտրային բանկերի միջոցներով ՓՄՁ սուբյեկտներին տրամադրվել է 2031.1 մլն դրամի չափով վարկ: ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների սուբսիդավորմանը Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից ուղղվել է 656.4 մլն դրամ:

«ՓՄՁ սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն» ծրագրի շրջանակում թողարկվել են «Սպասարկման ոլորտն Արցախում» 4-րդ տեղեկատվական պարբերականը, «Ներդրողի ուղեցույց» տեղեկատվական գրքույկի անգլերեն-ֆրանսերեն տարբերակը:

«ՓՄՁ սուբյեկտների կողմից թողարկվող արտադրանքի /մատուցվող ծառայությունների/ շուկաներում առաջմղմանն աջակցություն» ծրագրի շրջանակում ապահովվել է ՓՄՁ սուբյեկտների մասնակցությունը մի շարք միջազգային միջոցառումներին: 2012թ. հունիսի 23-24-ը ԼՂՀ Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում տեղի ունեցավ BRIDGE ARTSAKH 2012 հերթական տնտեսական համաժողովը:

Սպառողական շուկա

Չափումների միասնականության ապահովման բնագավառում ստուգաչափման են ենթարկվել 1115 տարբեր տեսակի կշեռքներ, 602 հատ կշռաքարեր, 102 վառելիքաբաշխիչ աշտարակներ, 5656 գազի և էլեկտրական հաշվիչներ :

Ստանդարտացման բնագավառում մշակվել են մի շարք տեխնիկական կանոնակարգեր: Կատարվել են 12 տնտեսավարող սուբյեկտների տեխնիկական պայմանների փորձաքննություն և գրանցում:

Համապատասխանության գնահատման բնագավառում 98 հանրային սննդի և 49 արտադրական օբյեկտների տրվել են համապատասխանության սերտիֆիկատներ:

Կատարվել է համապատասխանության հսկողություն սննդի ծառայություններ իրականացնող 7 և սննդամթերքներ արտադրող 17 տնտեսավորող սուբյեկտներում: Հավատարմագրվել է մեկ տնտեսավարող սուբյեկտի փորձարկման լաբորատորիա: Պարբերական վերահսկողության են ենթարկվել նախկինում հավատարմագրված 3 տնտեսավարող սուբյեկտների փորձարկման լաբորատորիաներ:

Տնտեսական զարգացման 2012 թվականի միջոցառումների ծրագրի շրջանակում միջոցներ են ձեռնարկվել՝ ուղղված ԼՂՀ «Ստանդարտացման, չափագիտության և սերտիֆիկացման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ սննդամթերքի լաբորատորիայի տեխնիկական վերազինմանը:

Առևտրի և արտադրության ոլորտում վերահսկողությանն ուղղված ստուգումներ են իրականացվել 76 տնտեսավարող սուբյեկտներում՝ նպատակաուղղված ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերով և տեխնիկական կանոնակարգերով արտացոլված պահանջների կատարմանը, ինչի արդյունքում հայտնաբերվել են տարաբնույթ խախտումներ, որոնք վերացվել են սահմանված ժամկետներում:

Հիփոթեքային վարկային շուկա

2012 թվականին շարունակվել է առևտրային բանկերի միջոցով հիփոթեքային վարկավորմամբ բնակարանների և բնակելի տների ձեռքբերմանը պետական աջակցության ծրագրի իրականացումը հետևյալ ուղղություններով.

- «Հիփոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» ծրագրով 324 քաղաքացու տրամադրվել է 2264.8 մլն դրամի վարկ: Տարվա ընթացքում վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանն ուղղված գումարը կազմել է 375.2 մլն դրամ,

- «Հիփոթեքային վարկերի կանխավճարների նպատակային փոխառությամբ տրամադրում» ծրագրին ուղղվել է 41.4 մլն դրամ՝ ֆինանսավորվել են 20 քաղաքացիներ,

- «Իրացնելու նպատակով բնակարանների /առանձնատների/ կառուցում և գնում» ծրագրին ուղղվել է 2490.8 մլն դրամ: Ավարտին են հասցվել Մարտունի քաղաքի Արցախ թաղամասում գտնվող 7 առանձնատների և Մարտակերտ քաղաքում գտնվող 18 բնակարանանոց շենքի կառուցման աշխատանքները, շարունակվել են Շուշի քաղաքում գտնվող 48 բնակարանանոց բնակելի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքները: ԼՂՀ շրջաններում իրականացվել են նաև բազմազավակ և զոհված ազատամարտիկների ընտանիքների համար 67 առանձնատների կառուցման շինարարական աշխատանքներ: Ստեփանակերտում ձեռք են բերվել թվով 74 բնակարան՝ հիփոթեքային վարկավորմամբ իրացնելու նպատակով, ինչպես նաև ԼՂՀ տարբեր շրջաններում բազմազավակ և զոհված ազատամարտիկների ընտանիքների համար 14 առանձնատներ,

- «ԼՂՀ շրջկենտրոններում բնակվող քաղաքացիների կողմից բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական ֆինանսական աջակցություն» ծրագրին ուղղվել է 75.1 մլն դրամ, արտոնյալ պայմաններով Շուշի, Ասկերան և Հադրութ քաղաքների նորակառույց շենքերից բնակարան են ձեռք բերել 6 ընտանիքներ,

- «ԼՂՀ ոստիկանության ծառայողների կողմից բնակարանների և բնակելի տներ ձեռք բերելու ֆինանսական աջակցություն» ծրագրին ուղղվել է 105.8 մլն դրամ,

- «Հիփոթեքային փոխառություններ գյուղաբնակ քաղաքացիներին» ծրագրով արտոնյալ պայմաններով նպատակային փոխառությունների տրամադրմամբ ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել 88 ընտանիքի, 74 ընտանիք ստացել են երկրորդ և հաջորդ փուլերի փոխառություններ: Տարվա կտրվածքով տրամադրված փոխառությունների ընդհանուր գումարը կազմել է 213.7 մլն դրամ:

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսությունը հանդիսանում է հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկը և ունի չափազանց մեծ դեր ու նշանակություն երկրի անվտանգության, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործում: Բավական է նշել, որ 2007-2011 թվականներին գյուղատնտեսությունը միջինում ապահովել է երկրի համախառն ներքին արդյունքի 13.4 տոկոսը, իսկ 2012 թվականին՝ 14.3 տոկոսը:

Գյուղատնտեսությունում 2012թ. իրականացված քաղաքականությունը նպատակաուղղվել է ճյուղի և նրան սպասարկող ոլորտների գործունեության արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Իրականացվող աշխատանքների հիմքում դրված են եղել կառավարության կողմից հաստատված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության, Հադրութի շրջանի Ուխտաձորի և Բանաձորի, Մարտակերտի շրջանի Մաղավուզի ենթաշրջանների համայնքներում գյուղատնտեսության զարգացման 2012թ. միջոցառումների ծրագրերը: Նախատեսված միջոցառումները հիմնականում իրականացվել են:

2012 թվականին գյուղատնտեսության ոլորտին պետական բյուջեից հատկացված միջոցներն ուղղվել են հետևյալ ծրագրերի իրականացմանը՝

- բույսերի պաշտպանության միջոցառումների ծրագիրը, որն իրականացվել է «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի միջոցով, մասնավորապես.

  - հանրապետության տարածքում մկնանման կրծողների դեմ պայքարն իրականացնելու համար ձեռք է բերել 5080 կգ ցինկի ֆոսֆիդ թունանյութ և բաշխել ըստ շրջանների՝ համաձայն ներկայացված հայտերի.
  - մորեխների դեմ պայքարն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 650 լիտր «ֆյուրի» թունանյութ և կազմակերպվել են պայքարի աշխատանքներ այդ վնասատուների դեմ՝ վերահսկողություն սահմանելով միջոցառումների ճիշտ իրականացման ուղղությամբ.

-«Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով սորտափորձարկման է դրվել աշնանացան ցորենի 36 սորտ: Լաբորատոր քննությամբ ստուգվել են հացահատիկային կուլտուրաների ու եգիպտացորենի 360 և

բանջարանաբոստանային կուլտուրաների 40 նմուշներ: Հրապարակվել են սելեկցիոն նվաճումների 15 պետական գրանցամատյաններ.

- անասնաբուժական և սանիտարական սպասարկման միջոցառումների իրականացման համար կատարվել են 1433400 գյուղկենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ կանխարգելիչ սրսկումներ.

- անասնաբուժական հակահամաճարակային նախազգուշական միջոցառումների իրականացման համար (պաստերելյոզ, սալմոնելյոզ, ԼՏՖ -130, կատաղություն, բրադզոտ, լեպտոսպիրոզ և այլ հիվանդությունների դեմ) գնվել են կենսապատվաստուկներ, որոնք բաշխվել են ըստ անասնաբուժական կայանների.

- «Հանրապետական անասնաբուժական լաբորատորիա» ՊՈԱԿ-ի միջոցով իրականացվել է արյան քննություն՝ 67857 նմուշ, թունաբանական հետազոտություն՝ 238 նմուշ, մանրէաբանական հետազոտություն՝ 391 նմուշ և մակաբուծական հետազոտություն՝ 261 նմուշ.

- «Խորհրդատվական և տպագրական ծառայությունների ու մոնիտորինգի կազմակերպում» ծրագրի շրջանակում մատուցվել են խորհրդատվական ծառայություններ, տպագրվել են ձեռնարկներ, ձեռք են բերվել մասնագիտական ամսագրեր, թերթեր, ինչպես նաև տարբեր այլ ծառայություններ և ապրանքներ.

- «Գյուղտեխնիկայի պետհամարանիշների և հատուկ փաստաթղթերի պատվիրում» միջոցառման իրականացման համար ձեռք են բերվել գյուղտեխնիկայի հաշվեպիտակներ և տրակտորիստ –մեքենավարի վկայականներ.

- «Արհեստական սերմնավորման միջոցառումներ» ծրագրով իրականացվել են կենդանիների սերմնավորման և սերմնահեղուկի պահպանման աշխատանքներ:

2012թ. գյուղատնտեսական միջոցառումների իրականացման ծրագրերի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- «Պարարտանյութերի և սերմերի սուբսիդավորում» ծրագրով ԼՂՀ տարածքում գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին աջակցելու նպատակով սուբսիդավորվել են ձեռքբերված սերմերը և պարարտանյութերը (4.1 տ արևածաղկի, 503.1 տ կարտոֆիլի, 134.5 տ գարու, 140.2 տ հաճարի, 60.0 տ հնդկացորենի սերմեր, ինչպես նաև 299.0 տ կալիումի քլորիդ և 699.0 տ ամոֆոս պարարտանյութ),

- հանրապետությունում եգիպտացորենի արտադրության խթանման նպատակով եգիպտացորենի արտադրության սուբսիդավորման ծրագրի շրջանակում ձեռք է բերվել 54032.4 կգ նշված կուլտուրայի սերմ, որը տրամադրվել է հողօգտագործողներին,

- Ենթաշրջանային ծրագրերի իրականացման շրջանակում Հադրութի շրջանի Ուխտաձորի և Բանաձորի, Մարտակերտի շրջանի Մաղավուզի ենթաշրջանների համայնքներում գյուղատնտեսության զարգացման նպատակով կատարվել են ներդրումներ, որոնց շնորհիվ համայնքների համար ձեռք են բերվել խոշոր և մանր եղջերավոր անասուններ և իրականացվել ոռոգման համակարգի բարելավման աշխատանքներ,

- «Սև ցել կատարողներին աջակցություն» ծրագրի շրջանակում կատարվել են 1113.3 հա սև ցելի աշխատանքներ,

-«Տոհմային կայան» ՓԲԸ-ի համար անասնապահական համալիրի և հողամասի ձեռքբերման» ծրագրով Ասկերան և Սարուշեն համայնքներում ձեռք են բերվել պահեստ և ֆերմա՝ ընկերության կարիքների համար օգտագործման նպատակով,

- «Տոհմային կայան» ՓԲԸ-ի համար կատարվել են կապիտալ վերանորոգման աշխատանքներ, ձեռք են բերվել սարքավորումներ,

- «Բազմամյա խոտաբույսերի մշակության սուբսիդավորում» ծրագրով ձեռք է բերվել 76.0 տ կորնգանի և 3.5 տ առվույտի սերմ, որն ըստ ներկայացված հայտերի տրամադրվել է հողօգտագործողներին,

- «Մեքենա - տրակտորային կայանների վերազինում» ծրագրով ձեռք են բերվել գյուղատնտեսական տեխնիկա և սարքավորումներ,

- «Անասնաբուժական սպասարկման կայանների, «Բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ների կառուցում, վերանորոգում» ծրագրով կատարվել են շինարարական աշխատանքներ,

- «Սերմնաարտադրության» ծրագրի շրջանակում իրականացվել են աշնանացան ցորենի սերմերի արտադրության աշխատանքներ, ինչպես նաև ձեռք են բերվել գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ,

-«Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցություն» ծրագրով աջակցություն է ցուցաբերվել «Լուսակերտ» ՍՊԸ-ին,

-«Կենտրոնացված կարգով գույքի և սարքավորումների ձեռքբերում» ծրագրով ձեռք են բերվել գույք և սարքավորումներ և ըստ անհրաժեշտության բաժանվել համակարգի հիմնարկներին:

Քաղաքաշինություն

Յուրաքանչյուր պետության համար քաղաքաշինությունը ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներից է, որի կայուն զարգացումը նպաստում է երկրի

սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված մի շարք կարևորագույն հիմնախնդիրների լուծմանը:

ԼՂՀ 2012թ. պետական բյուջեում կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 14,287.1 մլն դրամ: 2012թ. կապիտալ ներդրումների պետական պատվերով կատարված աշխատանքների տվյալներն ըստ ճյուղերի հետևյալն են:

Բնակարանային խնդիրն առաջնահերթ տեղ է զբաղեցնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության սոցիալական հիմնախնդիրների շարքում: **Բնակարանաշինությունը** ծավալվել է հետևյալ հիմնական ուղղություններով.

1. **Զոհված ազատամարտիկների ընտանիքների բնակարանների վերանորոգում և կառուցում,** որի համար պետական բյուջեից հատկացվել է 90.5 մլն դրամ,

2. **Այլ սոցիալական խմբերին պատկանող ընտանիքների բնակելի տների վերանորոգման և կառուցման** նպատակով 2012թ. հատկացվել է 176.5 մլն դրամ,

3. **Վերաբնակիչների և փախստականների սոցիալական (բնակարանային) խնդիրների լուծման ծրագրով** 2012թ. ԼՂՀ պետական բյուջեից հատկացված գումարը կազմել է 193.9 մլն դրամ,

4. **ԼՂՀ-ում ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների իրականացման** նպատակով 2012թ. բնակարանաշինարարական աշխատանքների համար հատկացվել է 95.6 մլն դրամ,

5. **Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների** համար տների կառուցման համար գումարը կազմել է 11.0 մլն դրամ,

<u>Կրթության ոլորտում</u> շարունակվել են աշխատանքները դպրոցական և նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնադաստիարակչական պրոցեսը հարմարավետ շենքային պայմաններում կազմակերպելու ուղղությամբ: Այդ նպատակով 2012թ. կատարվել են 1597.7 մլն դրամի կապիտալ ներդրումներ:

Դպրոցական շենքերի ջեռուցումն ապահովելու նպատակով չգազաֆիկացված բնակավայրերում շարունակվել է ջեռուցման նոր համակարգի տեղադրման գործընթացը:

2012թ. շարունակվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ համաֆինանսավորման սկզբունքով դպրոցաշինության ծրագիրը: Նշված ծրագրի շրջանակում ընթացքի մեջ են Շուշի քաղաքի Եզնիկ Մոզյանի անվան դպրոցի, Մարտակերտի շրջանի Վաղուհաս և Մարտունու շրջանի Սոս գյուղերի մանկապարտեզների շենքերի կառուցման աշխատանքները և Շուշի քաղաքի Խ.Աբովյանի անվան դպրոցի շենքի վերանորոգման աշխատանքները :

ԼՂՀ արտաբյուջետային միջոցների հաշվին այս ոլորտում իրականացվել և ավարտվել են Ստեփանակերտ քաղաքի թիվ 3 դպրոցի վերանորոգման աշխատանքները, իսկ թիվ 6 նոր դպրոցական համալիրի կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են :

2012թ. կապիտալ ներդրումները **մշակույթի և սպորտի** բնագավառում կազմել են 180.3 մլն դրամ:

Հասարակական և վարչական նշանակության օբյեկտներում կատարվել են կառուցման և վերանորոգման աշխատանքներ 1895.0 մլն դրամի չափով:

ԼՂՀ ավտոճանապարհների վերակառուցման, վերանորոգման և պահպանման նպատակով հաշվետու տարում կապիտալ ներդրումները կատարվել են 3,792.4 մլն դրամի չափով:

Առողջապահության ոլորտում կատարված կապիտալ ներդրումների ծավալը կազմել է 311.7 մլն դրամ: Առողջապահության ոլորտի ներդրումները կատարվել են արտաբյուջետային միջոցների՝ հիմնականում «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի կողմից կատարված մուտքերի հաշվին: Այս ծրագրի շրջանակում ավարտված է «Արևիկ» մանկական բուժմիավորման շենքի նկուղային հարկի և որոշ սենյակների վերանորոգման, Մարտակերտի շրջանային հիվանդանոցի նոր շենքի կառուցման 1-ին փուլի աշխատանքները, իսկ պոլիկլինիկայի մասնաշենքի վերանորոգման աշխատանքներն ընթացքի մեջ են: Ընթացքի մեջ են նաև Մարտունի, Կովսական և Բերձոր քաղաքների հիվանդանոցների շենքերի կառուցման աշխատանքները:

Շինարարական աշխատանքներ են իրականացվել նաև **գյուղատնտեսական միջոցառումների** իրականացման ծրագրով, որի կատարման համար հատկացվել է 1463.3 մլն դրամ: Ոլորտում ներդրումների գերակա ուղղություններն են ոռոգման համակարգերի ընդլայնումը, երկրագործության և անասնապահության զարգացումը:

Աշխատանքներ են իրականացվում հանրապետությունում տոհմային գործի հետագա զարգացման ուղղությամբ, որի շրջանակում ավարտվել են ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության հանրապետական անասնաբուժական լաբորատորիայի նոր շենքի կառուցման և տարածքի բարեկարգման, Խնապատ գյուղում անասնագոմի և անասուններին սիլոսով կերակրելու տարողության կառուցման աշխատանքները, իսկ նշված օբյեկտի շվաքարանի կառուցման և Հադրութի ու Մարտակերտի «Անասնաբուժական սպասարկման կայան» ՊՈԱԿ-ների շենքերի կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Առանձնակի ուշադրություն է դարձվել նախագծա - նախահաշվային փաստաթղթերի մշակման որակի բարձրացման և կատարելագործման վրա, այն

համապատասխանեցնելով նախագծման ժամանակակից պահանջներին, որի կատարման համար հատկացվել է 288.4 մլն դրամ:

Զբոսաշրջություն

Համաձայն ԼՂՀ զբոսաշրջության զարգացման 2012 թվականի ծրագրի և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկի կատարվել են հետևյալ աշխատանքները:

Տարվա ընթացքում մշտապես իրականացվել են քարոզչական աշխատանքներ՝ ուղղված ԼՂՀ զբոսաշրջային ներուժի գովազդելուն:

Զբոսաշրջային ներուժի քարոզչության նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջային արդյունքն առանձին տաղավարով ներկայացվել է երկու հեղինակավոր միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում՝ Փարիզում և Լոնդոնում, որը լուրջ խթան է հանդիսանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն այցելող օտարերկրյա զբոսաշրջիկների թվի աճի և գիշերակացի տևողության երկարաձգման համար:

Ամբողջությամբ ձևափոխվել և առավել արդիական է դարձել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջային պաշտոնական կայքէջը (www.karabakh.travel.): «Facebook» սոցիալական ցանցում ստեղծվել և պարբերաբար թարմացվում է Karabakh.travel պաշտոնական էջը: Շարունակվել են «Google Earth» համացանցային ծրագրի միջոցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զբոսաշրջային ներուժի քարոզչական աշխատանքները:

Անգլերեն լեզվով տպագրվել են առանձին զբոսաշրջային օբյեկտներին նվիրված՝ «Հունոտի կիրճ», «Արցախի հյուրանոցները» բրոշյուրներ՝ 6000 ընդհանուր տպաքանակով և «Տիգրանակերտ» լիֆլետ՝ 3000 տպաքանակով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում են «Karabakh*Information*» զբոսաշրջային տեղեկատվական 3 կենտրոններ՝ Շուշիում, Ծաղկաշատում և Տիգրանակերտում: «Karabakh*Information*» տեղեկատվական կենտրոնները 2012 թվականի ընթացքում սպասարկել են հազարավոր զբոսաշրջիկներ՝ նրանց տրամադրելով հավաստի և անվճար տեղեկություններ երկրի զբոսաշրջային ենթակառուցվածքների և այլ ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև այցելուներին աջակցություն է ցուցաբերվել նրանց հանգիստը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կազմակերպելու գործում:

Շարունակվել են դեպի զբոսագրավչության օբյեկտներ տանող մայրուղիների վրա նոր ճանապարհային ցուցանակների տեղադրման և արդեն տեղադրված ճանապարհային ցուցանակների սպասարկման և վերանորոգման աշխատանքները: Տեղադրվել են 6 նոր

ճանապարհային ցուցանակներ՝ «Հունոտի Կիրճ» արգելոց տանող ճանապարհի վրա և Շուշի քաղաքում գործող թանգարանների համար: Վերանորոգվել են նախկինում տեղադրված ավելի քան քսան ճանապարհային ցուցանակներ:

Կատարվել են օրենսդրական և ենթաօրենսդրական դաշտի կարգավորմանն ուղղված աշխատանքներ, որոնցից կարևորագույնը՝ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծն է, որի համաձայն սահմանվել են զբոսաշրջային գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համար պարտադիր հաշվառման, զբոսաշրջության բնագավառը կարգավորորող օրենսդրության պահանջների խախտումների կանխարգելման ու վերացման պահանջները:

«Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն կատարվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների հաշվառումը, հաշվառվել են նորաբաց 2 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ: Կատարվել է հաշվառված հյուրանոցային տնտեսության օբյեկտների դիտարկում, որի արդյունքում 7 հյուրանոցային տնտեսության օբյեկտներում վերացվել են օրենքի պահանջների խախտումները: Շարունակվել է նաև հյուրանոցների որակավորման գործընթացը: Որակավորման վկայական է ստացել ևս մեկ հյուրանոց:

Պատմամշակութային հուշարձանների պահպանման և վերականգնման ոլորտ

2012թ. ընթացքում հուշարձանների պահպանության և ուսումնասիրման բնագավառում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ուսումնասիրվել և վկայագրվել է 116 պատմամշակութային հուշարձան: Կազմվել է 70 հուշարձանի պահպանության գոտի:

Հուշարձանների ուսումնասիրման շրջանակներում պեղման-ուսումնասիրման աշխատանքներ են իրականացվել Ազոխի քարանձավում, Տիգրանակերտ հնավայրում, Քաշաթաղի շրջանի Կերենի դամբարանադաշտում, նորահայտ «Կարկառ» բերդաքաղաքում, Մարտակերտի շրջանի Կաշենի հանքավայրի տարածքում և Հոռեկավանքում:

Ընթացքավորվել են հուշարձանների սեփականության իրավունքի գրանցման գործառույթները: Գրանցվել է «Ղարղաբազար» իջևանատան սեփականության իրավունքը:

Ընթացքի մեջ են Շուշի քաղաքի 18 հուշարձանի սեփականության իրավունքի գրանցման գործառույթները:

Պատրաստվել և տեղադրվել է 33 հուշարձանի ցուցատախտակ: Հուշարձանների քարոզչության և հրատարակչական աշխատանքների շրջանակներում տպագրվել են «Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում» (2005-2010թթ.) գիրքը և ԼՂՀ Մարտակերտի շրջանի պատմամշակութային հուշարձանների ցուցակը:

Տարվա ընթացքում ներկայացվել և քննարկվել են ԼՂՀ Հադրութի շրջանի Կարմրակուճ գյուղի «Սբ. Աստվածածին» եկեղեցու, Մարտակերտի շրջանի Ճանկաթաղ գյուղի եկեղեցու վերականգնման, Հադրութի շրջանի Տող գյուղի մելիքական ապարանքի հարակից բնակելի տան /նախկին դպրոցի շենքի/ վերականգնման և օգտագործման աշխատանքների էսքիզային նախագծերը:

2012 թվականի ընթացքում իրականացվել են նաև պատմամշակութային հուշարձանների բարեկարգման, ամրակայման և վերականգնման աշխատանքներ: Հուշարձանների վերականգնման բնագավառում աշխատանքներ են իրականացվել Սարուշենի Փիրումաշեն եկեղեցում, գրեթե ամբողջությամբ վերականգնվել են եկեղեցու պատերը, մասնակի ամրացվել են հիմքերը: Աշխատանքներ են տարվել նաև եկեղեցու ներսում, լրիվությամբ վերականգնվել է մկրտության ավազանը: Աշխատանքները կրում են շարունակական բնույթ և կվերսկսվեն 2013 թվականին:

Վերականգնման աշխատանքներ են իրականացվել 2011 թվականին սկսված Տող գյուղի Մելիք Եգանի ապարանքում՝ հիմնականում այն սևեռելով գլխատան վերականգնման վրա: Աշխատանքներ են տարվել պատերի վերաշարման ուղղությամբ, իսկ ընդունարանում կատարվել են տանիքի քիվերի տեղադրման աշխատանքներ: Մելիքական ապարանքում աշխատանքները կիրականացվեն 2013 թվականին:

2012 թվականին զգալի աշխատանքներ են իրականացվել Գտչավանքում: Սալապատվել է տանիքի մեծ հատվածը: Սալիկապատվել են հատակները, տեղադրվել են տանիքի քիվերը և այլն: Այս հուշարձանում նունպես աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

Տիգրանակերտ հնավայրի և շրջակայքի վերականգնման և տարածքի բարեկարգման աշխատանքների ծրագրով 2012 թվականին իրականացվել են Վանքասար եկեղեցու վերականգնման աշխատանքները: Աշխատանքներ են տարվել եկեղեցու պատերի մասնակի վերականգնման, դռների տեղադրման, խորանի սեղանի տեղադրման ուղղությամբ:

Սխտորաշենի աղբյուր-հուշարձանի տարածքում 2012 թվականին ևս կատարվել են մի շարք աշխատանքներ, բայց լիովին այն ավարտին կհասցվի 2013 թվականին:

Աշխատանքներ են տարվել «Կարկառ» բերդաքաղաքում, Սխտորաշեն գյուղի «Տնջրե» ծառի տարածքում, Տիգրանակերտի պատմական արգելոցի տարածքում, Սուրբ Աստվածածին կամ Կուսանաց անապատ Վանական համալիրի տարածքում, Տիգրանակերտի հնագիտական թանգարանի տարածքում, «Կիչան» գյուղի հին գերեզմանոցի տարածքում, «Հունոտի կիրճ» պետական արգելոցի տարածքում, Շուշիի հին գերեզմանոցի տարածքում, Շուշիի Թարխան Հարյուրապետի ապարանքի տարածքում:

Հուշարձանների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ծրագրով իրականացվել են մի շարք հուշարձանների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ, որոնց մի մասը կհանձնվի 2013 թվականին, դրանք են՝

- Տող գյուղի պատմամշակութային հիմնավորման նախագծի մշակման աշխատանքները.
- Հոռեկավանք վանքային համալիրի եկեղեցու գավթի և զանգակատան վերականգնման աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առաջին փուլի մշակման աշխատանքները.
- Ամարասի վանական համալիրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքները:

Թանգարանային գործի զարգացման ոլորտ

Ապագայում բացվելիք գորգի և ձեռագործության թանգարանի ցուցանմուշների ձեռքբերման ծրագրի համաձայն գնվել են ձեռագործ ուղեգորգեր, կարպետներ, գորգեր, կազմակերպվել են ցուցադրություններ, մասնավորապես Ազոխի քարանձավի նորահայտ նյութերի ներկայացմամբ: Տիգրանակերտի հնագիտական թանգարանում լրամշակվել է ժամանակավոր ցուցադրությունը:

Էներգետիկա

Էլեկտրաֆիկացում

2012 թվականին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգահամակարգը սեփական օգտագործման համար մուտք է գործել 263.7 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա, որից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ից՝ 99.3 մլն կվտ/ժամ, տեղական արտադրողներից՝ 164.5 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա: Օգտակար առաքումը կազմել է՝ 223.2 մլն կՎտ/ժամ, կորուստները՝ 40.5 մլն կՎտ/ժամ կամ 15.3%:

Պայմանավորված հանրապետությունում տարեցտարի աճող էլեկտրաէներգիայի սպառման ծավալներով՝ կատարվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված էներգահամակարգի հուսալիության և անվտանգության բարձրացմանը, նոր էներգատեղակայանքների կառուցմանը, ինչպես նաև աշխատանքներ են իրականացվել էլեկտրական էներգիայի կորուստների նվազեցման ուղղությամբ:

Ավարտին են հասցվել ԼՂՀ Քաշաթաղի շրջանի 110/35/10 կՎ լարման «Աղավնո» տրանսֆորմատորային ենթակայանի և 110 կՎ «Բերձոր» օդային գծի կառուցման աշխատանքները, 110 կՎ «Վանք» օդային գծի ուղեգծի տեղափոխման աշխատանքները՝ կապված «Ստեփանակերտ» օդանավակայանի անվտանգ շահագործման հետ, Ստեփանակերտ քաղաքի «Հայկավան» 110/35/10 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կարգավարական շենքի կառուցումը, Հերիկ գյուղի էլեկտրաֆիկացման աշխատանքները և մի շարք այլ շինարարական աշխատանքներ:

2012 թվականին էներգահամակարգի 110/35/10 կՎ տրանսֆորմատորային ենթակայաններում 110 կՎ ցանցի և նրանից սնվող 10 կՎ օդային գծերի էլեկտրաէներգիայի ծախսերի ավտոմատ հաշվառման համար շարունակվել են «Սկադա» համակարգի տեղադրման աշխատանքները: Ձեռք է բերվել ևս 38 հատ էլեկտրաէներգիայի ավտոմատ հաշվառման հաշվիչ և տեղադրվել նոր կառուցվող 110/35/10 կՎ «Աղավնո», «Հայկավան», գործող 35/10 կՎ «Ստեփանակերտ», «Երիցվանք», «Կովսական» տրանսֆորմատորային ենթակայաններում:

Համակարգում իրականացվել են նաև գործող 10/0.4 կՎ էներգատեղակայանքների ընթացիկ վերանորոգման և արդիականացման աշխատանքներ:

Էներգահամակարգի կայացման գործում մեծ դեր ունեն նաև համակարգում գործող ՀԷԿ-երը, որոնք հաշվետու ժամանակահատվածում արտադրել են շուրջ 164.5 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա՝ բավարարելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի ավելի քան 62%-ը:

2012 թվականին շահագործման են հանձնվել «Մատաղիս-1» և «Մատաղիս-2» ՀԷԿ-երը, որոնք 2013 թվականին նախատեսում են արտադրել շուրջ 20 մլն կՎտ/ժամ էլեկտրաէներգիա:

Գազաֆիկացում

2012 թվականին հանրապետություն է ներմուծվել 41.8 մլն մ^3 բնական գազ: Բնական գազի իրացումը կազմել է 38.7 մլն մ^3՝ նախորդ տարվա համեմատությամբ աճելով 3.4%-ով:

Բաշխիչ ցանցերում բնական գազի կորուստները կազմել են մոտ 4.27%, ինչը համապատասխանում է բնական գազի տեխնոլոգիական անխուսափելի կորուստների հաշվարկային նորմերին:

Ընդհանուր իրացված բնական գազի ծավալը բաշխվել է ըստ ոլորտների հետևյալ կերպ. բնակչություն՝ 37.0 %, գազալցակայաններ՝ 33.6 % և այլ հիմնարկներ՝ 29.4 %:

Հանրապետությունում ներկայումս գազաֆիկացված են 85 բնակավայր, որից 7-ը քաղաքային, իսկ 78-ը գյուղական:

Գազամատակարարման ցանցերում 2012 թվականին շարունակվել են իրականացվել անվտանգ սպասարկման, վերականգնման, նորոգման և շահագործման ընթացիկ աշխատանքներ:

Ջրամատակարարում և ջրահեռացում

2012 թվականի ընթացքում ջրային համակարգերի բնագավառի աշխատանքային գործունեության հիմքում ընկած էին «ԼՂՀ ջրային օրենսգրքի», «ԼՂՀ ջրի ազգային ծրագրի» և «Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին» օրենքների հիմնադրույթները, ինչպես նաև ԼՂՀ կառավարության՝ ջրային ոլորտի բարեփոխումներին ուղղված որոշումները, գերակա խնդիրներն ու միջոցառումները, որոնցով հաստատված են համակարգի հիմնական ծրագրային ուղղությունները:

Շարունակվել են աշխատանքներ ջրամատակարարման տևողությունների ավելացման ու ջրի որակի բարելավման, մատակարարված ջրի դիմաց վճարների հավաքագրման մակարդակի բարձրացման, համակարգում կորուստների նվազեցման, ջրաչափական սարքերի տեղադրման ու փոխարինման ուղղությամբ:

2012թ. ընթացքում ԼՂՀ ջրային համակարգերի վիճակն ուսումնասիրելու նպատակով մասնագետների կողմից իրականացվել են 226 համայնքների ջրային համակարգերի արտաքին և ներքին ցանցերի ուսումնասիրություններ և տրվել վերլուծություն:

Իրականացվել են ստուգումներ ջրամատակարարման և ջրօգտագործման կանոնների խախտմամբ ջուրն օգտագործելու, ինքնակամ հիդրոտեխնիկական շինարարական աշխատանքներ կատարելու, ջրային համակարգերի վիճակի վրա ազդող ինքնակամ աշխատանքներ կատարելու, մատակարարվող ջրի հաշվառման և իրացման գործընթացը կանոնակարգելու ուղղությամբ:

Ջրի ոչ պատշաճ օգտագործման վերաբերյալ վերահսկողության արդյունքներով արձանագրվել է 11 վարչական իրավախախտում, որից՝ 9-ը ոռոգման, 2-ը

ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերում: Կազմվել են վարչական վարույթներ, նշանակվել են տուգանքներ:

Տրանսպորտային ենթակառուցվածքներ

2012թ. կազմակերպված մրցույթների շնորհիվ հանրապետության ավտոտրանսպորտային պարկը համալրվել է նոր ավտոբուսներով, վերականգվել է Առաջաձոր, Ռեվ, Հարավ և Կովսական բնակավայրերի սպասարկումը: Պարբերաբար կազմակերպվել են ավտոբուսների համալրման և փոխարինման մրցույթներ:

2012թ. ընթացքում 100 կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի տրամադրվել են մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ու երկու կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիաներ: Կանոնավոր ուղևորափոխադրումների համար կազմակերպվել է 12 մրցույթ: Լիցենզիայի ներդիրներ են տրվել 159 մարդատար տաքսիների և 30 ավտոբուսների:

Իրականացված բարեփոխումների և միջոցառումների արդյունքում լուրջ առաջընթաց է գրանցվել հանրապետության բնակավայրերի կանոնավոր ուղևորափոխադրումների կազմակերպման գործում, և ներկայումս սպասարկվող բնակավայրերի թիվը կազմում է 216:

Համաձայն ԼՂՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1039-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների՝ 2012թ. հունվարի 1-ից հանրապետությունում տաքսամոտորային փոխադրումներում ներգարվվել են նաև ռուսական արտադրության 10 տարի և ավելի փոքր տարիք ունեցող ավտոմոբիլներ (նախկին 15 տարվա փոխարեն):

2013թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ են իրականացնում լիցենզավորված 201 կազմակերպություն՝ 379 ավտոմոբիլներով:

Աշխատանքներ են կատարվել ուղևորափոխադրումները պատշաճ մակարդակով կազմակերպելու և սպասարկման որակը բարձրացնելու ուղղությամբ: Ստեփանակերտի ավտոկայանում ստեղծվել են բարենպաստ պայմաններ ուղևորներին համապատասխան սպասարկում մատուցելու համար՝ գործում է մոր և մանկան սենյակը, տաքացվում է սպասասրահը, տեղադրված է էլեկտրոնային ցուցատախտակ, որը ցույց է տալիս երթուղիների չվացուցակը: 2012թ. տեղադրվել են նոր տեսախցիկներ, որոնք հնարավորություններ են ստեղծում վերահսկելու ընդհանուր կարգապահությունը, ժամանակին հայտնաբերելու կատարված խախտումները և այլն:

Հաշվետու ժամանակահատվածում տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության է ենթարկվել 11 876 ավտոմեքենա:

Տեսչական վերահսկողությամբ արձանագրվել է թվով 191 խախտման դեպք (տաքսամոտորային ուղևորափոխադրումներում՝ 59, միջպետական, միջշրջանային և ներշրջանային ուղևորափոխադրումներում՝ 119, ներքաղաքային ուղևորափոխադրումներում՝ 13):

Տեղերում զննվել են 156 միավոր ինքնագնաց ճանապարհաշինարարական, շինարարական և այլ մեքենամեխանիզմներ, գրանցվել և վերագրանցվել է 65 միավոր տեխնիկա:

Ավիացիա

2012 թվականին շարունակվել են աշխատանքները՝ ուղղված Ստեփանակերտի օդանավակայանի վերագործարկմանը և ԼՂՀ ու ՀՀ միջև օդային հաղորդակցության ստեղծմանը:

Աշխատանքները հիմնականում ուղղված էին գործող իրավական դաշտի բարելավմանն ու համալրմանը, օդանավակայանի վերգետնյա միջոցների համալրմանը, աերոդրոմի բարելավմանը, նավիգացիոն հնարավորությունների բարձրացմանը, փոխադրումները կազմակերպող ընկերության ստեղծմանն աջակցմանը, թռիչքային և տեխնիկական անձնակազմի պատրաստմանը:

Մշակվել և ԼՂՀ կառավարության կողմից հաստատվել են թվով 6 որոշում, որոնք կանոնակարգում են ոլորտի ավիացիոն անվտանգության, օբյեկտների պահպանման, թռիչքների, աերոնավիգացիոն սպասարկման սակագների հետ կապված հարցերը:

Մշակվել և հաստատվել են թվով 19 գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր, որոնք կանոնակարգում են թռիչքների կազմակերպման ու ապահովման, ուղևորների սպասարկման, մասնագետների ատեստավորման, նրանց գործողությունների կանոնակարգման հետ կապված հարցերը:

Հաստատվել է օդային երթևեկության կառավարման կարգավարների վարժանքի ծրագիրը:

Օրենսդրության համաձայն համապատասխան մասնագետների կողմից կազմակերպվել են ստուգումներ «Ստեփանակերտի օդանավակայան» և «ԱՐՑԱՏՍՈՒ» փակ բաժնետիրական ընկերություններում, որոնց ընթացքում ուսումնասիրվել են ավիացիոն սարքավորումների աշխատանքը, մասնագետների գիտելիքները, ներքին կանոնակարգերը, տեղական հրահանգները և ձեռնարկները: Արդյունքում

օդանավակայանին տրվել է աերոդրոմի սերտիֆիկատ՝ որոշակի սահմանափակումներով, իսկ «ԱՐՑԱՏՍՈՒ» ՓԲԸ-ին՝ օդային երթևեկության կազմակերպման, աերոնավիգացիոն կապի և դիտարկման, աերոնավիգացիայի օդերևութաբանական ապահովման, աերոնավիգացիոն տեղեկատվության ծառայություն իրականացնելու թույլտվություն:

Կատարվել են նաև հետևյալ աշխատանքները՝

- ձեռք են բերվել, տեղակայվել և գործարկվել են «Բակլան-20» տիպի երկու ռադիոկայան, կարճալիք ICOM IC-78 տիպի ռադիոկայան, «Տրանսպորտ 30*4» մուլտիպլեկսոր, հորիզոնի լուսազդանշանային համակարգ, անլար կապի ապահովման համար ռադիոռելեային սարքավորում.

- ձեռք են բերվել վազքուղու շփման գործակիցը չափող և օդանավի սնուցումն ապահովող սարքերը.

- ձեռք են բերվել օդանավի քարշակը և օդանավի հակասառցակալման մշակման համար հատուկ սարքավորումը:

Իրականացվել է օդանավակայանի ենթակայանի սխեմայի և էլեկտրասնուցման համակարգի վերակառուցում, ինչը թույլ է տալիս ապահովել բոլոր հիմնական սարքավորումները հիմնական և ռեզերվային սնուցումով՝ ավտոմատացված ռեժիմով :

Իրականացվել են 4 օդաչուների վերապատրաստման դասընթացների կազմակերպումը միջազգային օդաչուական դպրոցում, ինչպես նաև ուսումնական թռիչքներ, ինչի արդյունքում օդաչուները ստացել են համապատասխան տիպի օդանավ վարելու թույլտվություն:

Կազմակերպվել են ավիափոխադրողի տեխնիկական անձնակազմի վերապատրաստման և որակավորման աշխատանքներ՝ հրավիրելով միջազգային սերտիֆիկատ ունեցող ուսումնական հաստատության մասնագետների:

Քաղաքացիական ավիացիայի ոլորտի հետ առնչվող կազմակերպությունների և մարմինների հետ կազմակերպվել և տեղակայվել է հեռախոսային և օպտիկամալուխային կապ: Ոլորտի աշխատանքները կազմակերպելու և համաձայնեցնելու նպատակով ստեղծվել և հաստատվել է AFTN կապ «Էրեբունի» օդանավակայանի աէրոդրոմային կարգավորման կետի, «Զվարթնոց» օդանավակայանի բրիֆինգ օֆիսի և Հայաստանի Հանրապետության ավիացիայի շրջանային կենտրոնի հետ:

Շահագործման են հանձնվել ԿՌԱՍՍ 4 օդերևութաբանական սարքավորումները և P3D բազմադիրքային ռադիոլոկացիոն համակարգը:

Իրականացվել են մի շարք աշխատանքներ՝ ուղղված աերոդրոմի պահպանմանը և նրա համապատասխանեցմանը միջազգային պահանջներին, մասնավորապես

իրականացվել են A և D ղեկուղու և վազքուղու լծորդումները, կառուցվել են ցուցիչ վահանակներ և կատարվել վազքուղու շեմերի ու աերոդրոմի հսկիչ կետերի ռեպերների տեղադրում: Իրականացված է աերոդրոմի արհեստական ծածկույթների լոկալ վերանորոգում:

Կազմակերպվել են մի շարք աշխատակիցների պրակտիկ դասընթացներ «Զվարթնոց» օդանավակայանում և Հայաստանի Հանրապետության ավիաուսումնական կենտրոնում:

Հեռահաղորդակցություն

2012թ. հեռահաղորդակցության ոլորտում հիմնական աշխատանքներն ուղղվել են ԼՂՀ կառավարության 2008թ. հոկտեմբերի 28-ի «ԼՂՀ ռադիոհեռուստատեսության բնագավառում հեռարձակման զարգացման և թվային համակարգի ներդրման ծրագրի հաստատման մասին» թիվ 729 որոշմամբ հաստատված պետական ծրագրի իրականացմանը:

Ռադիոծածկույթից դուրս գտնվող և սահմանամերձ համայնքները սոցիալական փաթեթի հեռուստածրագրերով ապահովելու նպատակով՝ 2012 թվականին շարունակվել է DVB-S ձևաչափի վերահաղորդիչ կայանների տեղադրումը: 2012թ. տարեվերջի դրությամբ ԼՂՀ տարածքում տեղադրվել և շահագործվում է 42 լրակազմ DVB-S վերահաղորդիչ կայան:

Տեղադրված և սպասարկվող բաժանորդային արբանյակային կցորդների քանակը ներկայումս կազմում է 6450 կոմպլեկտ, որոնց 10.4%-ը տեղադրվել են «Արցախկապ» ՓԲԸ կողմից սոցիալապես անապահով ընտանիքների համար:

Համաձայն «Արցախկապ» ՓԲԸ կողմից կատարված չափագրումների, ԼՂՀ համայնքներում հեռուստառադիոհեռարձակման ապահովվածությունը կազմում է՝ Ստեփանակերտ քաղաքում՝ 99.0 %, Ասկերանի շրջանում՝ 97.4%, Հադրութի շրջանում՝ 95,2%, Մարտակերտի շրջանում՝ 93.0%, Մարտունու շրջանում՝ 88.4%, Շահումյանի շրջանում՝ 77.9%, Շուշիի շրջանում՝ 98.1% և Քաշաթաղի շրջանում՝ 54.6%:

2012թ. ճշգրտվել են թվայնացման ծրագրի իրականացման փուլերը և անհրաժեշտ գումարների չափը:

Փոստային կապ

2012 թվականին «Արցախփոստ» ՓԲԸ կողմից իրականացվել են կենսաթոշակների և սոցիալական ապահովության գումարների վճարման, կոմունալ-կենցաղային

վարձավճարների հավաքագրման, փոստային վճարման պետական նշանների /նամականիշերի/ վաճառքի, նամակագրության, հեռագրերի եւ ծանրոցների առաքման ծառայությունները: Սահմանված ձևով եւ առանց ուշացումների իրականացվել է կենսաթոշակների /այդ թվում՝ զինվորական/, նպաստների, միանվագ օգնության եւ այլ հատուցումների վճարումը քաղաքացիներին:

Թողարկվել է 10 նամականիշ՝ 280 հազար ընդհանուր տպաքանակով: Մարվել և շրջանառության մեջ են դրվել «ԵՎՐՈՊԱ-2010. Մանկական գիրք», «ԵՎՐՈՊԱ-2011. Անտառներ», «Շուշիի ազատագրման 20-ամյակ», «ԼՂՀ ՊԲ 20-ամյակ», «Արցախի ֆլորա և ֆաունա. Խնդողնի» թեմաներով նամականիշերը:

Հեռախոսակապ

2012թ. զգալի աճ է արձանագրվել հեռախոսակապի և ինտերնետ կապի հասանելիության ընդլայնման գործընթացում.

- բջջային կապի մասով 2012թ. բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 85474 բաժանորդ,
- ֆիքսված հեռախոսակապի մասով 2012թ. բաժանորդների ընդհանուր քանակը կազմել է 30298 բաժանորդ:

2012թ. իրականացվել են բջջային կապի ծածկույթի ընդլայնման աշխատանքներ Հադրութի, Շահումյանի և Մարտունու շրջանների որոշ համայնքներում:

2012թ. ինտերնետ կապով ապահովվել են հանրապետության Ասկերանի շրջանի Շոշ գյուղը, Քարվաճառ շրջկենտրոնը և Մարտակերտի շրջանի Վարդաձոր համայնքը: Ինտերնետ կապի բնագավառում կատարվել է նաև սակագների զգալի իջեցում՝ մոտ 40-50%, ինչպես նաև ինտերնետ կապի որակի բարելավում՝ ի շնորհիվ օպտիկամալուխային կապի ներդրման:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը կարևորվում է որպես տնտեսության ընդհանուր առաջընթացի, արտադրողականության և մրցունակության բարձրացման գործիք:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի արդյունավետ կառավարման նպատակով ԼՂՀ կառավարության կողմից 2012 թվականի նոյեմբերի 30-ի N859 որոշմամբ ստեղծվել է «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամը: Կենտրոնը կիրականացնի մասնագետների պատրաստման և վերապատրաստման

կարճաժամկետ և երկարաժամկետ ուսումնական ծրագրեր, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կազմակերպություններին կտրամադրի գրասենյակային և աշխատանքային տարածքներ, ուսումնական և հետազոտական լաբորատորիաներ, կմատուցի բիզնես զարգացման աջակցություն, մասնավորապես՝ միջոցների ներգրավման, գործարար կապերի ձևավորման և բիզնես խորհրդատվության տրամադրման ուղղություններով:

ԼՂՀ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ծրագրերի շրջանակներում 2012թ. «Անձնական զարգացումը, ձեռնարկությունը և տեխնոլոգիական ձեռնարկատիրությունը» թեմայով կազմակերպվել են դասընթացներ և խորհրդատվություններ, ինչպես նաև «ԼՂՀ տեխնոլոգիական զարգացում» թեմայով համաժողով, որտեղ դասընթացների մասնակիցների կողմից ներկայացված թվով 5 բիզնես-կոնցեպցիաներ համաժողովի մասնակիցների կողմից հավանության են արժանացել:

2012 թվականին ԼՂՀ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններում աշխատանքի անցնելու նպատակով Արցախցի թվով 20 երիտասարդ մասնագետների համար ՀՀ Երևան քաղաքում կազմակերպվել է մեկամսյա դասընթաց, որի ընթացքում ունկընդիրները ուսուցանել են ծրագրավորման արդի մի շարք լեզուներ: Ծրագիրն իրականացվել է համաֆինանսավորմամբ՝ ՀՀ ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և ԼՂՀ կառավարության կողմից, և անվճար էր վերապատրաստվողների համար:

<u>Բնապահպանություն և բնօգտագործում</u>

Բնապահպանության և բնօգտագործման ոլորտում 2012թ. իրականացվող քաղաքականությունն ուղղված էր շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի վրա վնասակար ներգործությունների կանխարգելմանը կամ նվազեցմանը, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործմանն ու վերականգնմանը:

Բնապահպահպանության և բնօգտագործման բնագավառում առկա խնդիրների լուծման և բնագավառի պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են համապատասխան միջոցառումներ ուղղված՝

- ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործմանը.
- տնտեսական ծրագրերի գծով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական համակարգի կատարելագործմանը.

- բնության և շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ վերահսկողության առավել բարձր չափանիշների սահմանմանը.

- բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը.

- անտառային կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործման անհրաժեշտությամբ պայմանավորված անտառային էկոհամակարգերի բնապահպանական միջոցառումների իրականացմանը:

Իրականացվել են անտառների պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրմանը և անտառօգտագործմանն ուղղված մի շարք միջոցառումներ, մասնավորապես բնական աճի ուսումնասիրության, աջակցման, անտառային ճանապարհների կառուցապատման ու վերանորոգման և բնափայտի մթերման տարեկան չափաքանակի ապահովման ուղղությամբ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության բնագավառում բնապահպանական փորձաքննության ու ուսումնասիրության են ենթարկվել 87 ծրագրեր և տրամադրվել 79 փորձաքննական եզրակացություն ու թույլտվություն:

ԼՂՀ ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում ուսումնասիրվել է 31 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել են ջրօգտագործման թույլտվություններ:

Ջրօգտագործման բնագավառում ստուգման են ենթարկվել 19 կազմակերպություններ:

Կենդանական աշխարհի պահպանության և կառավարման բնագավառում 2012 թվականին որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում տրամադրվող թույլտվությունների քանակը նվազեցվել է 2011 թվականի համեմատ մոտ 4 անգամ: Իրականացվել են գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումներ:

Ընդերքի ողջամիտ ու համալիր օգտագործման, ինչպես նաև մասնավոր ներդրումների աճի ապահովման նպատակով իրականացվել են միջոցառումներ՝ ուղղված՝

- օգտակար հանածոների հանքավայրերի հետախուզմանն ու գնահատմանը.
- օգտակար հանածոների նմուշների լաբորատոր փորձաքննությունների իրականացման համար ժամանակակից սարքավորումներով հագեցված լաբորատորիայի ստեղծմանը.
- օգտակար հանածոների հանքավայրերի և երևակումների ֆոնդի ձևավորմանը.
- օգտակար հանածոների հաշվառման մեխանիզմների կատարելագործմանը.
- մետաղական օգտակար հանածոների հարկման մեխանիզմների բարելավմանը:

2012 թվականին ուսումնասիրվել և տրամադրվել են 12 հանքարդյունահանման և 9 երկրաբանական ուսումնասիրության լիցենզիաներ, դադարեցվել են 11 հանքարդյունահանման և 19 երկրաբանական ուսումնասիրության լիցենզիաներ:

ԼՂՀ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքներ են տարվել ԼՂՀ Շահումյանի, Մարտունու, Հադրութի, Քաշաթաղի շրջաններում ազնիվ և գունավոր մետաղների որոնման, հայտնի հանքերևակումների որոնողա-գնահատման ու վերստուգիչ աշխատանքների իրականացման, ինչպես նաև երկրաբանական ֆոնդի տվյալների սկանավորման ու թվայնացման ուղղություններով:

Մետաղային օգտակար հանածոների հանքերևակումների երկրաբանական ուսումնասիրություններին զուգընթաց արձանագրվել են նաև ոչ մետաղային օգտակար հանածոների, այդ թվում՝ վարդագույն տուֆի տարածման մի շարք տեղամասեր:

Մետաղական օգտակար հանածոների բնագավառում հաշվառման մեխանիզմների կատարելագործման նպատակով մշակվել և ընդունվել են «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» և «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» ԼՂՀ օրենքներում փոփոխություն կատարելու մասին ԼՂՀ օրենքների նախագծերը, որոնք ուղղված են մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար ռոյալթիի՝ որպես բնօգտագործման վճարի սահմանմանը:

Հաստատվել է ռոյալթի վճարողների կողմից հանքարդյունաբերության արտադրանքի՝ մետաղի խտանյութի իրացումից հասույթի հաշվարկման կարգը:

Իրականացված տեսչական ստուգումների և ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել ու օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 74 տարբեր տեսակի իրավախախտումներ:

Սոցիալական ապահովություն և ժողովրդագրություն

2012թ. իրականացրած քաղաքականության համար հիմք են ընդունվել ԼՂՀ Նախագահի նախընտրական և ԼՂՀ կառավարության գործունեության ծրագրերի դրույթները: Իրականացրած սոցիալական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ հանրապետությունում ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, բնակչության կենսամակարդակի հետևողական բարձրացումը, սոցիալական անհավասարության կրճատումը:

Ժողովրդագրական քաղաքականություն

Ժողովրդագրական իրավիճակի բարելավման համատեքստում 2012թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- 870 նոր ամուսնացած զույգերին (այդ թվում՝ ԼՂՀ պաշտպանության բանակում ծառայող՝ ՀՀ քաղաքացիություն ունեցող պայմանագրային զինծառայողների նորաստեղծ 25 ընտանիք) տրամադրվել է 300.0 հազ. դրամի չափով ամուսնության նպաստ: Ծրագրի ընդհանուր ծախսը 2012թ. կազմել է 261.0 մլն դրամ,

- ծնելիության և բազմազավակության խթանման ծրագրի շրջանակներում շարունակվել է երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստների տրամադրումն ու 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի անվամբ նպատակային ժամկետային ավանդների բացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում 2678 երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացվել է 733.8 մլն դրամի չափով ծննդյան միանվագ նպաստ, ինչպես նաև 451.7 մլն դրամի չափով բացվել են 783 ժամկետային ավանդներ: «ԼՂՀ-ում ծնելիության խթանում» ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 1,185.5 մլն դրամ,

- 1725 չաշխատող կանանց տրամադրվել է հղիության և ծննդաբերության նպաստ՝ յուրաքանչյուրին 149.5 հազ. դրամի չափով.

- շարունակվել են 6 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիքների համար նոր բնակելի տների կառուցման աշխատանքները, որն իրականացվում է կապիտալ ներդրումների ծրագրով:

Միգրացիոն քաղաքականություն

Միգրացիոն քաղաքականության հիմնական նպատակը հայրենադարձության ծրագրերի իրականացումը և միգրացիոն ներհոսքի խթանումն է: 2012թ. ԼՂՀ տեղափոխվել և վերաբնակչի կարգավիճակ է ստացել 415 մարդ (114 ընտանիք) (2011թ.՝ 169 ընտանիք՝ 580 անդամներով): Բոլոր վերաբնակիչներին տրամադրվել են ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունները: Վերաբնակիչների և փախստականների սոցիալական խնդիրների լուծման ծրագրով 2012թ. ծախսվել է 58.4 մլն դրամ:

Ընտանիքի և երեխաների հիմնահարցեր

Շարունակվել է 2009 թվականի հունվարի 1-ից նոր սկզբունքով գործող պետական նպաստների ծրագիրը (սահմանվել են պետական նպաստի բազային չափը և դրան բազմապատիկ գործակիցները):

Պետական նպաստների ծրագրով 2012թ. ծախսվել է 2606.1 մլն դրամ (2011թ.՝ 2651.7 մլն դրամ), իսկ նպաստառուների թվաքանակը կազմել է 19020 մարդ:

Իրականացվել է առանց ծնողական խնամքի մնացած 48 երեխաների կենտրոնացված հաշվառումը: 2012թ. առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 1 անձի հատկացված բնակելի տունը կահավորվել է 2.5 մլն դրամի սահմաններում:

Համակարգում գործող Երեխաների խնամքի և պաշտապանության երկու գիշերօթիկ հաստատություններում 2012թ. ընթացքում խնամք են ստացել առանց ծնողական խնամքի մնացած, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների 5 տասնյակից ավելի երեխաներ, ինչի համար ԼՂՀ պետական բյուջեից ծախսվել է 75.3 մլն դրամ:

2012թ. գիշերօթիկ հաստատություններում 42 երեխաներին հատկացվել են ըստ 7-12 և 13-18 տարիքային խմբերի համապատասխանաբար 2000 և 3000 դրամի չափով գրպանի մանր ծախսեր: Ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 1282.0 հազ. դրամ:

Սեպտեմբերի 1-ի՝ գիտելիքի և դպրության օրվա կապակցությամբ ԼՂՀ պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների նպաստառու 164 երեխաներին ԼՂՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվել է 30.0 հազ. դրամի չափով միանվագ դրամական օգնություն: Ընդհանուր ծախսը կազմել է շուրջ 5.0 մլն դրամ:

2012թ. ԼՂՀ Շահումյանի և Քաշաթաղի շրջանների 10385 բնակիչներին օգտագործված էլեկտրաէներգիայի կամ վառելափայտի դիմաց ԼՂՀ պետական բյուջեի միջոցների հաշվին տրամադրվել է ամենամսյա դրամական օգնություն: Ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 147.0 մլն դրամ:

Կենսաթոշակային ապահովություն և սոցիալական ապահովագրություն

Բնագավառի գերակա ուղղությունը կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ու ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է:

Ընդհանուր առմամբ կենսաթոշակների, վետերանների պատվովճարների, արտոնյալ խմբերի քաղաքացիներին ամենամսյա դրամական օգնության վճարման և առանձին խմբերի քաղաքացիներին մատուցվող ծառայությունների փոխհատուցման նպատակով պետական բյուջեից ծախսվել է 9883.1 մլն դրամ:

2012թ. հունվարի 1-ից 2500 դրամով բարձրացել է հիմնական կենսաթոշակի չափը՝ կազմելով 13.0 հազ. դրամ, ինչի շնորհիվ միջին տարիքային կենսաթոշակը հանրապետությունում կազմել է 35110 դրամ, իսկ միջին սոցիալական կենսաթոշակը՝ 17035 դրամ:

Աշխատանք և զբաղվածություն

2012թ. գործազուրկի կարգավիճակ ստացած անձանց թիվը կազմել է 2915 մարդ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 12.0%-ով, որից միայն 320-ը կամ 11.0%-ն է նպաստառու: 2012թ. գործազրկության նպաստի չափը կազմել է 19.5 հազ. դրամ (պահպանելով 2011թ. չափերը):

Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային պետական մարմին դիմած քաղաքացիներից 2012թ. աշխատանքի է տեղավորվել 201 մարդ, որից 167-ը գործազուրկ:

Պետական բյուջեի միջոցներով 2012թ. 118 գործազուրկների համար կազմակերպվել են մասնագիտական ուսուցման դասընթացներ:

Շարունակվել է 2009 թվականից մեկնարկած մասնագետներին խրախուսման և սոցաջակցության ծրագիրը, որի շրջանակներում այլ վայր աշխատանքի ուղեգրվող բժիշկներին տրամադրվել է ֆինանսական աջակցություն: 2013թ. հունվարի 1-ի դրությամբ ծրագրում ընդգրկված են 50 բժիշկներ: 2012թ. ծրագրի ընդհանուր ծախսը կազմել է 44.1 մլն դրամ:

Աշխատողների խախտված իրավունքների վերականգնման նպատակով իրականացված տեսչական ստուգումների արդյունքում 2012թ. վերականգնվել է շուրջ 5.2 մլն դրամի չվճարված աշխատավարձ: Արձանագրված խախտումների վերաբերյալ նշանակվել է 1.9 մլն դրամի վարչական տույժ:

Սոցիալական աջակցություն

Հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի բնագավառում իրականացվող ծրագրերն ուղղված են եղել հաշմանդամների սոցիալական վիճակի բարելավմանը, հասարակությանը նրանց ինտեգրմանը, հավասար (մատչելի) պայմանների ապահովմանը, բժշկական, սոցիալական և հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքներին: Մասնավորապես.

-ըստ անհրաժեշտության հաշմանդամներին տրամադրվել են պրոթեզավորման, պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ, թիկնասայլակներ, լսողական

սարքեր, քայլակներ, հենակներ, ձեռնափայտեր: Իրականացվել են հաշմանդամների վերջույթների և աչքի պրոթեզավորումներ: Ծրագրի ընդհանուր ծախսը 2012թ. կազմել է 45.3 մլն դրամ,

-պետական բյուջեի միջոցների հաշվին կազմակերպվել է առանձին սոցիալական խմբերին պատկանող քաղաքացիների առողջարանային բուժումը, ինչպես նաև նրանց տրամադրվել են հանգստյան տների ուղեգրեր: Այս ծրագրից օգտվել է ավելի քան 550 քաղաքացի, ծախսը կազմել է 95.0 մլն դրամ,

-հիշարժան օրերի կապակցությամբ միանվագ դրամական օգնություն է տրամադրվել Հայրենական Մեծ և Արցախյան ազատագրական պատերազմներում հաշմանդամ դարձած և զոհված զինծառայողների ընտանիքներին: Ընդ որում, ի նշանավորումն Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 67-ամյակի, մայիսի 9-ի կապակուցությամբ ՀՄՊ մասնակիցներին, հաշմանդամներին և ՀՄՊ-ում զոհվածների ընտանիքներին տրամադրվել է 50.0-հազարական դրամ, իսկ ՀՄՊ մասնակիցներին և հաշմանդամներին հավասարեցված անձանց՝ 25.0-հազարական դրամ: Շուշիի ազատագրման 20-ամյակի կապակցությամբ զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին տրամադրվել է 50.0 հազարական դրամ, իսկ ԽՍՀՄ մեդալակիրներին՝ 18.0 հազարական դրամ:

2012թ. ԼՂՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին ընդհանուր առմամբ հատկացվել է 13.2 մլն դրամի չափով միանվագ ապահովագրական վճար:

Վարժական հավաքների և զինծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության ու գերեզմանների բարեկարգման համար տրամադրվել է 58.8 մլն դրամի չափով փոխհատուցում:

Շարունակվել է 2010թ. կյանքի կոչված ԼՂՀ պաշտպանության ժամանակ 2 և ավելի զոհ տված ընտանիքներին ամենամսյա դրամական օժանդակության տրամադրման ծրագիրը: Ծրագրի տարեկան ծախսը կազմել է 39.7 մլն դրամ:

«Ստեփանակերտի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում 2012թ. խնամք են ստացել 75 ծեր և հաշմանդամ քաղաքացիներ, ինչի համար ԼՂՀ պետական բյուջեից ծախսվել է 105.4 մլն դրամ: Տուն-ինտերնատին կից գործում է միայնակ կենսաթոշակառուներին տնային պայմաններում սոցիալական սպասարկման բաժին, որն ապահովում է 150 միայնակ ծերերի խնամքը տնային պայմաններում:

2011 թվականից գործում է միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման «Ամենամսյա օժանդակություն՝ տնային պայմաններում սպասարկվող

միայնակ տարեցներին, հաշմանդամներին և սոցիալապես անապահով ընտանիքների անդամներին» ծրագիրը, որից ամսական միջինում օգտվում է 400 շահառու: 2012թ. ծախսը կազմել է 28.7 մլն դրամ:

Բժշկասոցիալական փորձաքննություն

2012թ. ԲՍՓ կենտրոնի կողմից իրականացվել է 2281 փորձաքննություն: Փորձաքննված քաղաքացիների 87.3%-ը (1991) հաշմանդամ է ճանաչվել (2011թ.՝ 2734 փորձաքննություն, որից 2315 ճանաչված հաշմանդամություն):

Կազմակերպվել են արտագնա փորձաքննական նիստեր՝ Ասկերան, Մարտակերտ, Հադրութ, Մարտունի, Շուշի քաղաքներում: Իրականացվել են 33 արտագնա փորձաքննություններ: Կազմակերպվել են 3 հսկողական փորձաքննություններ ՀՀ ԲՍՓ գործակալությունից հրավիրված մասնագետների մասնակցությամբ:

Բնակարանային հարցեր

2012թ. ընթացքում բնակարանային ծրագրերի համակարգման կենտրոնի կողմից ուսումնասիրվել են շուրջ 812 դիմում և ԼՂՀ շրջվարչակազմերի կողմից ստացված տեղեկություն ու ներկայացվել բնակարանային ծրագրերի համակարգման պետական հանձնաժողովի քննարկմանը: Տարվա ընթացքում հրավիրված 5 նիստերի ընդունված որոշումներով բնակարանային պայմանների բարելվման նպատակով պետական ծրագրում ընդգրկվել է 84 ընտանիք, այդ թվում՝ 19 զոհված ազատամարտիկների, 31 վեց և ավելի անչափահաս երեխաներ ունեցող, 17 վերաբնակ և փախստական, 6 Արցախյան ազատագրական պատերազմի հաշմանդամների, 2 սակավակարող և 9 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների:

Բարեգործական ծրագրեր

2012թ. բարեգործական են որակվել 48 ծրագրեր՝ 5.1 մլրդ դրամ ընդհանուր արժողությամբ:

Տարբեր պետություններից բարեգործական կարգով ընդունվել է ապրանքների 22 խմբաքանակ՝ 351.9 մլն դրամ արժողությամբ: «Հումանիտար օգնության միջոցառումներ» ծրագրի ծախսը 2012թ. կազմել է 12.1 մլն դրամ:

Դրամական և նյութական օգնություն

Դիմումների քննարկման և ուսումնասիրման արդյունքում «Դրամական (նյութական) օգնություն սոցիալապես անապահով քաղաքացիներին և ընտանիքներին» ծրագրի շրջանակներում 2012 թվականին քաղաքացիներին տրամադրվել է 57.3 մլն դրամի չափով դրամական և 35.0 մլն դրամի չափով նյութական օգնություն (2011թ.՝ համապատասխանաբար 48.4 և 2.8 մլն դրամ): Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին սոցիալապես անապահով առանձին խմբերի 5 հազարից ավելի քաղաքացիների տրամադրվել է նաև շուրջ 31.0 մլն դրամ ընդհանուր գումարով սննդամթերք:

Առողջապահություն

Բնակչության առողջության պահպանումը պետության կողմից դիտարկվում է որպես ազգային անվտանգության ապահովման կարևորագույն խնդիրներից մեկը:

2012թ. առողջապահության ոլորտի գործունեության քաղաքականության հիմքում դրված են եղել բնակչության առողջության պահպանման և բարելավման հստակորեն սահմանված հետևյալ հիմնական արժեքները՝ բուժօգնության տրամադրման հավասարություն, արդարություն, մատչելիություն, բժշկական օգնության որակի ապահովում, ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում:

Իրականացվող բարեփոխումներն անդրադառնում են համակարգի կազմակերպչական ու կառուցվածքային վերափոխումներին, օրենսդրական դաշտի բարելավմանը, ոլորտի օպտիմալացմանը և արդիականացմանը, առողջապահության ֆինանսական համակարգի և բժշկական օգնության կազմակերպման կատարելագործմանը:

Առողջապահության ոլորտում պահպանվել են պետության կողմից իրականացվող քաղաքականության ներքոհիշյալ գերակա ուղղությունները՝ մատչելի և որակյալ բժշկական օգնության ապահովումը, հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության պահպանման, բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ապահովումը, բժշկական օգնության որակի բարելավումը, հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից բուժվողների բուժօգնությունը, դեղորայքային ապահովումը, տեղեկատվական համակարգի կատարելագործումը, պետական ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումը:

Ելնելով առողջապահության ոլորտի ծրագրային գերակայություններից՝ 2012թ. առողջապահական պետական նպատակային ծրագրեր են հանդիսացել.

- բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովման ծրագիրը,
- բնակչության առողջության առաջնային պահպանման ծրագիրը,
- մոր և մանկան առողջության պահպանման ծրագիրը,
- բնակչության սոցիալապես անապահով և առանձին /հատուկ/ խմբերում ընդգրկված անձանց բժշկական օգնության ծրագիրը,
- սոցիալական կախվածություն և հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի ծրագիրը:

Ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում շարունակվել է գերակա համարվել բնակչության առողջության առաջնային պահպանման ապահովումը: Իրականացվել են առաջնային բուժօգնության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական բնակչության կարիքներին:

Առաջնային բուժօգնության օղակի աշխատանքները լիարժեք իրականացնելու համար կազմակերպվել են բազմաթիվ այցեր տարբեր շրջաններ և գյուղեր, տեղում ծանոթացել առկա խնդիրներին և հնարավորության սահմաններում տրվել համապատասխան լուծումներ: Առողջության առաջնային պահպանման /ԱԱՊ/ բժիշկներն ամիսը մեկ անգամ, իսկ նեղ մասնագետները /վիրաբույժ, ակնաբույժ, նյարդաբան, քիթ-կոկորդ-ականջաբան, սրտաբան/ տարեկան երկու անգամ, համաձայն տվյալ բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով հաստատված ժամանակացույցի, այցելություններ են կատարել կցագրված գյուղական համայնքներ և տեղում կատարել բնակչության ընդունելություն:

2012թ. շարունակվել է առաջնային բուժօգնության օղակի դերի բարձրացումը, կանխարգելիչ ուղղվածության ուժեղացումը, ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայության կողմից իրականացնող բուժօգնության տեսակների և դրա տեսակարար կշռի մեծացումը: Բուժհիմնարկներում բնակչության բուժօգնության և սպասարկման, ախտորոշման որակի բարձրացման նպատակով ձեռք են բերվել վերջին սերնդի համակարգչային շերտագրիչ, ստացիոնար և շարժական թվային ֆլյուրոգրաֆներ, ժամանակակից ռենտգեն-սարք, որը հնարավորություն է տալիս հեռակառավարման միջոցով կատարել բոլոր նպատակային ռենտգեն նկարահանումները, անդրադարձային տեսագրիչ /էխոսկաներ/:

«Հիգիենիկ հակահամաճարակային ծառայության պահպանում» ծրագրով իրականացվել են բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության

ապահովում, հանրային առողջության պահպանման նպատակով փորձագիտական հետազոտությունների անցկացում, ուսումնասիրություններ, լաբորատոր և գործիքային հետազոտություններ: Հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունն իրականացրել է հանրապետության տարածքում գործող ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների /անկախ սեփականության ձևից/ կողմից սանիտարա-համաճարակաբանական անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև բնակչության առողջության վրա արտաքին աշխարհի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցության կանխարգելում: Ուշադրության կենտրոնում էր ջրամատակարարման և ջրօգտագործման անվտանգության ապահովման խնդիրը, բնակելի տարածքների սանիտարական վիճակը՝ համաձայն գործող սանիտարական նորմերի և կանոնների:

2012 թվականի պետական բյուջեի շրջանակներում շարունակվել է նաև մյուս առողջապահական պետական նպատակային ծրագրերի իրականացումը:

ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեից առողջապահական համակարգին հատկացված միջոցների արդյունավետությունը բարձրացնելու և ծախսերը վերահսկելու նպատակով ստուգումներ են կատարվել բուժհիմնարկներում, ինչպես նաև վերջիններիս կողմից ներկայացվող ամսական և եռամսյակային հաշվետվությունների մասով:

Դեղային և տեխնոլոգիական քաղաքականությունն ուղղված է եղել դրանց մատչելիության, անվտանգության և կիրառման արդյունավետության բարձրացմանը: Հանրապետության բնակչությանը որակյալ դեղերով ապահովելու մատչելիությունը կանոնակարգելու նպատակով 2012 թվականին իրականացվել են հետևյալ միջոցառումները՝

- «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռք բերում» հոդվածով նախատեսված գումարներով ձեռք է բերվել դեղորայք, որը տրամադրվել է ԼՂՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 20-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող սոցիալական խմբերի եւ հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին» N555 որոշմամբ հաստատված անձանց.

- բուժհիմնարկների բյուջեներում նույն նպատակով հատկացված գումարների միջոցով ձեռք բերված դեղերի թվաքանակը մասամբ համալրել է հիվանդների պահանջարկը: Շարունակվել է հեպատիտ «C» և ուռուցքային հիվանդություններով տառապող անձանց պետական աջակցությամբ բարձրարժեք դեղորայքով մասնակի ապահովումը: Իրականացվել է ԼՂՀ կառավարության համապատասխան որոշմամբ

սահմանված կարգով սոցիալապես անապահով քաղաքացիներին որոշ վիրահատությունների համար ֆինանսական աջակցություն ցուցաբերելու ծրագիրը.

- շարունակվել են բուժկետերի մատակարարումը դեղանյութերով եւ բժշկական պարագաներով՝ ինչպես պետական բյուջեով նախատեսված գումարների, այնպես էլ տարբեր բարեգործական կազմակերպությունների միջոցով:

Աշխատանքներ են իրականացվել բուժաշխատողների հետդիպլոմային շարունակական կրթության գործընթացը մատչելի դարձնելու ուղղությամբ: ԼՂՀ բուժհիմնարկների լաբորատորիաները բժիշկ մասնագետներով համալրելու նպատակով պետական պատվերի շրջանակներում Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կլինիկական օրդինատուրա են ընդունվել թվով 9 մասնագետներ: Շարունակվել է բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման գործընթացը: Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան տարբեր երկրներում անվճար հիմունքներով վերապատրաստվել են թվով 40 բժիշկներ: Վերապատրաստումներն անց են կացվել Ամերիկյան հայ օգնության ֆոնդի ծրագրերի շրջանակներում ՀՀ առաջատար բուժհիմնարկներում և Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանում, ինչպես նաև տարբեր բարեգործական ծրագրերի շրջանակներում՝ արտասահմնանյան երկրներում:

ԼՂՀ առողջապահության նախարարության և Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում անվճար հիմունքներով կազմակերպվել են արտագնա վերապատրաստման դասընթացներ քաղաք Ստեփանակերտում, որին մասնակցել են ինֆեկցիոն հիվանդանոցի և համակարգի բոլոր դիսպանսերների թվով 50 բուժքույրեր և ստացել համապատասխան վկայականներ:

Շարունակվել է բուժհիմնարկները բժշկական կադրերով համալրելու գործընթացը: Բուժհիմնարկներ են ուղեգրվել թվով 29 բժիշկներ, այդ թվում 5-ը՝ Հայաստանի Հանրապետությունից:

2012 թվականին շարունակվել է բուժքույրերի ստաժավորման գործընթացը, որի շրջանակներում ստաժավորովել և որակավորման ստուգման վերաբերյալ վկայականներ են ստացել 67 բուժքույրեր:

ԼՂՀ կառավարության որոշմամբ հաստատված «Այլ վայր աշխատանքի ուղեգրվող բժշկին ֆինանաասական աջակցության ցուցաբերում» ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետությունից Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն աշխատելու համար տեղափոխված 5 բժշկի աշխատավարձին սահամանվել է հավելավճար: Ծրագրի

շրջանակներում 2012 թվականին ֆինանսական աջակցություն են ստացել համակարգի 34 բժիշկներ:

Կրթության և գիտություն

Կրթության համակարգի կառուցվածքը ԼՂՀ-ում բխում է «Կրթության մասին» ԼՂՀ օրենքից և հիմնվելով սահմանադրական դրույթների վրա՝ ուղղորդում է համակարգի զարգացումը:

Հանրապետությունում պետական կրթական քաղաքականությունը գործնականում իրականացվում է ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, ԼՂՀ Նախագահի նախընտրական ծրագրից բխող դրույթների, ԼՂՀ կրթության և գիտության նախարարության հրամանների և ընդհանուր աշխատանքային պլանի շրջանակներում: Այդ քաղաքականության հիմքում զուգակցվում են ազգային և համաշխարհային /միջազգային/ նորարարությունները, ինչն առավել բարձր որակ ապահովելու նպատակ է հետապնդում:

Կրթության և գիտության ոլորտում ուսման որակը բարձրացնելու և ներկայիս պահանջներին համապատասխանեցնելու նպատակով 2012 թվականին համակարգում շարունակվել են իրականացվել բարեփոխումներ: Հանրակրթությունը, որը ներառում է նախադպրոցական, տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթությունը, որպես կրթության ոլորտի հիմնական գերակայություն դիտարկվել է բարեփոխումների շարունակական իրականացման համար մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության տեսանկյունից: 2012 թվականին շարունակվել է պետական նախադպրոցական ուսումնական հաստատություններ և դպրոցներին կից նախադպրոցական խմբեր ստեղծելու պետական քաղաքականությունը: Երեխաներին տարրական դպրոցին նախապատրաստելու համար ապահովվել է դպրոցներին կից նախադպրոցական խմբերի գործունեությունը՝ մեծացնելով նախադպրոցական կրթական ծրագրերում երեխաների ընդգրկվածությունը:

41 նախադպրոցական ուսումնական հաստատություններում ընդգրկված է 3351 երեխա, որից 2615-ը՝ 27 պետական մանկապարտեզներում, իսկ 744-ը՝ ոչ պետական մանկապարտեզներում: Ավագ նախադպրոցական երեխաներին դպրոցին նախապատրաստելու նպատակով դպրոցներին կից գործում են 36 նախադպրոցական խմբեր՝ 682 երեխաների ընդգրկմամբ:

Նախադպրոցական կրթության ապահովման նպատակով լուրջ ուշադրություն է դարձվել այդ հաստատություններում ղեկավար և մանկավարժական աշխատողների

ընտրությանը, նրանց մասնագիտական կարողությունների բարձրացմանը, մանկապարտեզների նյութական հագեցվածությանը, ուսումնամեթոդական օժանդակությանը, ավագ խմբերում կրթական նոր ծրագրերի ներդրմանը: 2012 թվականից ներդրվել են կրտսեր և միջին խմբերի կրթական նոր չափորոշիչներ և ծրագրեր:

2012 թվականին հանրակրթության ոլորտի կարևորագույն խնդիրներից է եղել կրթության ոլորտի բարեփոխումների իրականացման օրենսդրական դաշտի ապահովումը, որի հիմնական առանցքը «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարմանն էր ուղղված: Հանրակրթության ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպատակաուղղված է սովորողների պարտադիր հիմնական կրթության և միջնակարգ կրթության ապահովմանը, որն ընթանում է ոլորտի բարեփոխումների աստիճանական իրականացմամբ:

ՀՀ դպրոցականներին տրամադրվել են դասագրքեր՝ անվճար հիմունքներով, իսկ ուսուցիչներին՝ այդ դասագրքերին համապատասխան՝ ուսուցչի ձեռնարկներ, մեթոդական և հայ դասական գրողների ծրագրային գրականություն:

Առաջին դասարաններ ընդունված 2115 դպրոցականներին տրամադրվել է 20 հազարական դրամ, որի նպատակն էր նրանց հագուստով և գրենական պիտույքներով ապահովելը:

Կրթության բովանդակային բարեփոխումները կապված են նաև ուսումնական հաստատությունների շենքային պայմանների հետ: 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների և արտաբյուջետային միջոցների հաշվին վերակառուցվել ու շահագործման են հանձնվել երեք դպրոցական և մեկ մանկապարտեզի շենքեր, իսկ 33 կրթօջախների շինարարական աշխատանքները կշարունակվեն 2013 թվականին:

Սովորողների ունակությունների ու կարողությունների բացահայտման նպատակով անցկացվել են առարկայական օլիմպիադաներ, շարադրությունների ու այլ ստեղծագործությունների մրցույթներ, գեղանկարչական ցուցահանդեսներ, ռազմամարզական մրցումներ, որին նպաստում են ուսումնական հաստատություններում և արտադպրոցական հիմնարկներում կազմակերպվող խմբակային պարապմունքները, որոնցում ընդգրկված են շուրջ 8200 սովորողներ:

Ուշադրության կենտրոնում են գտնվել երեխաների ամառային հանգստի կազմակերպման աշխատանքները. «Ասպետ» և «Գանձասար» ճամբարներում ընդգրկվել են 1095 դպրոցականներ, և ծախսերը կազմել են 29.5 մլն դրամ:

2012 թվականին համալրվել է ուսումնական հաստատությունների համակարգչային համակարգը. բարերարների միջոցներով նոր տեղեկատվական կաբինետներ են կահավորվել Ստեփանակերտի N3, N4, N5, N9, N10, Բերձորի N 2 և Թալիշի դպրոցներում, ընդհանուրը՝ շուրջ 21 մլն դրամ արժողությամբ :

Ելնելով հանրապետությունում ծավալված սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացի իրականացման պահանջներից, ինչպես նաև ավագ դպրոցներում ըստ նախասիրությունների հոսքային ուսուցման անհրաժեշտությունից՝ խիստ կարևորվել են արհեստագործական կրթության ապահովման նպատակով շենքային և նյութատեխնիկական հագեցվածության բարելավման աշխատանքները: Այսպես, Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի մասնագիտությունների ցանկում ավելացվել է «Կտորի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտությունը: Մարտունու արհեստագործական ուսումնարանի մասնագիտությունների ցանկից հանվել է «Հասարակական սնունդ» մասնագիտությունը, ավելացվել՝ «Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում» մասնագիտությունները: 2012 թվականի պետական բյուջեով նախնական մասնագիտական /արհեստագործական/ կրթության գծով հատկացված միջոցները կազմել են 168.6 մլն դրամ:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում շարունակվում է առաջնահերթ խնդիր դիտվել ինտեգրումը Եվրոպական բարձրագույն կրթական տարածքին: Այս կապակցությամբ շարունակվում է նորմատիվային այնպիսի ակտերի մշակման գործընթացը, որոնք միտված են նպաստելու բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությանը: Այսպես, հաստատվել են կառավարության մի շարք որոշումներ և գերատեսչական ակտեր, որոնք վերաբերում են բարձրագույն կրթության ոլորտին և նպաստում են առկա հիմնախնդիրների լուծմանը:

Գիտությունը՝ որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն, միշտ գտնվել է պետության ուշադրության կենտրոնում: Գիտության զարգացման գործում մեծ դեր ունի Արցախի գիտական կենտրոնը, որի անմիջական ղեկավարությամբ իրականացվում են գյուղատնտեսության, շինարարության, ընդերքի հետազոտման, ինչպես նաև Արցախի բանահյուսության և պատմության ուսումնասիրման բնագավառներին վերաբերող գիտահետազոտական աշխատանքներ, որոնցում

ընդգրկված են ԼՂՀ և ՀՀ պետական բուհերի ու համապատասխան կառույցների գիտաշխատողները:

Կատարվող աշխատանքների որակի բարձրացման և գիտական կադրերի պատրաստման նպատակով Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գործուն աջակցությամբ և պետական բյուջեով հատկացված միջոցների ներդրմամբ կենսաքիմիական ուղղություն ունեցող երեք լաբորատորիաներում գիտական աշխատողների և լաբորատորիայի վարիչների ներգրավմամբ իրականացվում են գիտական հետազոտություններ 5 թեմաների գծով՝ 20 մլն դրամ գումարով, որից 18 մլն դրամը հատկացվել է ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից:

2012 թվականին Արցախի գիտական կենտրոնի ղեկավարությամբ իրականացվել են 8 թեմաներ՝ 19.3 մլն դրամ գումար ֆինանսավորմամբ, որոնցից 1-ի կատարումն ավարտվել է, իսկ 7 թեմաներ կշարունակվեն իրականացվել 2013 թվականին:

Մշակույթ և երիտասարդություն

Մշակույթի և երիտասարդության ոլորտում 2012 թվականին վարած քաղաքականությունն իրականացվել է մշակութային և երիտասարդական պետական քաղաքականության գերակա ուղղություններով:

Մշակույթի ոլորտի իրավական կարգավորման ուղղությամբ հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել է «Ոչ նյութական մշակութային ժառանգության մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը և «Ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանության, պաշտպանության, տարածման և օգտագործման 2012թ. տարեկան ծրագիրը»: Մշակվել է «Գրադարանների և գրադարանային գործի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը:

ԼՂՀ-ում գործող թանգարանների՝ որպես ազգային մշակութային արժեքների, գործունեության կազմակերպման աշխատանքներին մշակույթի լիազոր մարմնի ներգրավման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ թանգարանների լիազոր մարմին է ճանաչվել ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը:

Ոլորտի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարվել են կառուցվածքային փոփոխություններ:

Ստեղծագործական ներուժի բացահայտման և զարգացման հնարավորության ստեղծման, շոու-ծրագրերի, համերգների, մշակութային միջոցառումների կազմակերպման, մեդիա արտադրանքի թողարկման և պրոդյուսերական գործունեության

պայմանների ապահովման նպատակով 2012թ. մարտի 15-ին ստեղծվել է «Արցախի ձայն» ՓԲԸ-ն:

2012թ. մշակութային և երիտասարդական միջոցառումների ծրագրի շրջանակներում իրականացվել է 20 ենթածրագիր, որից՝ 12-ը մշակութային, 8-ը՝ երիտասարդական, և 267 միջոցառում, որից 224-ը՝ մշակութային, 43-ը՝ երիտասարդական: Մասնավորապես.

Մշակույթի ոլորտում `

- ՀՀ և արտերկրի հետ համագործակցության խթանման և մշակութային ինտեգրման ուղղությամբ իրականացվել է 4 միջազգային նախագիծ. «Հակոբ Գյուրջյան» քանդակագործության երկրորդ միջազգային սիմպոզիում, «Արմմոնո» միջազգային թատերական փառատոն, «Ամադեուս» մրցույթ-փառատոն և «Վարպետության դասեր»: Նշված նախագծերի շրջանակներում համագործակցություն է հաստատվել 12 երկրների հետ: 2012թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Իտալիայի Վոլտերրա քաղաքի քաղաքապետարանում կազմակերպվել է իտալացի նկարիչ Ռոբերտո Ջիովաննելլիի ցուցահանդեսը, որը նվիրված էր Արցախին: Համատեղ համերգներ են կազմակերպվել Հայաստանի 4 համույթների և արտերկրի 3 մենակատարների ու 1 խմբի հետ.
- ապահովվել է արցախցի 4 անհատ կատարողների և 4 մշակութային կոլեկտիվների մասնակցությունը միջազգային մրցույթների ու փառատոների ՀՀ-ում, Լիտվայում, Նորվեգիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Իտալիայում և Ֆրանսիայում.
- մշակույթի ոլորտի կադրերի պատրաստման, վերապատրաստման և վերաորակավորման համալիր ծրագրով ՀՀ-ում վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել Արցախի երգիչների և գրադարանային աշխատողների համար.
- Արցախի շնորհալի երեխաների ստեղծագործական կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում Գերմանիայից և Լիտվայից հրավիրված մասնագետների ներգրավմամբ, արցախցի պատանի դաշնակահարների, ջութակահարների և վոկալիստների համար կազմակերպվել են վարպետության դասեր, որոնցում ընդգրկվել են Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի և Ստեփանակերտի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի 29 սաներ.
- տոնական և հիշատակի օրերի նշանավորման ծրագրի շրջանակներում կազմակերպվել է 11 տոնական և 1 հիշատակի օրվա համերգ.
- ԼՂՀ շրջաններում մշակութային կյանքի խթանման նպատակով կազմակերպվել է «Մշակութային խաչմերուկ» մրցույթը, որին մասնակցել է 74 համայնք: Մրցույթի արդյունքներով մրցանակներ և խրախուսական նվերներ են հանձվել

համապատասխանաբար 12 և 9 համայնքների : Կենտրոնացված կարգով հյուրախաղեր են կազմակերպվել հանրապետության 14 համայնքներում.

- մշակութային ժառանգության ուսումնասիրության, նյութերի հավաքագրման և քարոզչության նպատակով Շուշիում կազմակերպվել է հայկական գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտական կոնֆերանս՝ «Շուշին՝ հայկական մշակույթի օջախ» թեմայով : Կազմակերպվել են ցուցահանդեսներ, ձեռք են բերվել ոչ նյութական մշակութային ժառանգության նյութական նմուշներ:

Հաշվետու ժամանակաշրջանում հրատարակվել է 5 անուն գիրք, այդ թվում՝ 1 մեթոդական ձեռնարկ: Ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել Իտալիայում Շուշիի «Հակոբ Գյուրջյան» քանդակագործության միջազգային սիմպոզիումին նվիրված գիրք-ալբոմի հրատարակման ծրագրին:

Գրադարանային գործի զարգացման նպատակով երկու հանրապետական գրադարանների կողմից կազմակերպվել են 148 միջոցառումներ:

Մ. Մաշտոցի անվան հանրապետական և Հովհ. Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարանները 2012թ. սպասարկել են 12289 ընթերցողի, հաճախումների թիվը կազմել է 129917, գրքատացքը՝ 245191: Ընթերցողների բազմակողմանի զարգացման և նրանց աշխարհայացքի ձևավորման նպատակով կազմակերպվել են գրական-գեղարվեստական ցերեկույթներ /8/, ընթերցանություններ /10/, գրքային ցուցահանդեսներ /30/, հանդիպումներ արցախցի գրողների հետ /6/, զրույցներ /25/, գրքերի քննարկումներ /2/, էքսկուրսիաներ /2/, պատրաստվել են գրադարանային պլակատներ /61/, թեմատիկ գրադարակներ /4/:

Մշակութային նոր արտադրանքի ստեղծման նպատակով պետական պատվերով գործիքավորվել է 1 օպերա, 1 սիմֆոնիա, ստեղծվել է 5 նոր երգ, թողարկվել է 1 խտասկավառակ, բեմադրվել է 3 նոր ներկայացում:

Հաշվետու ժամանակաշրջանում գույք և սարքավորումներ են ձեռք բերվել ԼՂՀ մշակույթի և երիտասարդության պալատի, «Մենք ենք, մեր սարերը» երգի-պարի պետական համույթի, Արցախի պարի պետական համույթի, Ստեփանակերտի պարարվեստի քոլեջի, Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետդրամթատրոնի, «Ղարաբաղ» պետական էստրադային համույթի, «Մռակած» պետական կամերային երգչախմբի, «Արցախի ձայն» ՓԲԸ, Հադրութի մշակույթի և երիտասարդության կենտրոնի, Շուշիի մշակույթի և երիտասարդության կենտրոնի, Բերձորի արվեստի և սպորտի դպրոցի, Հ. Գյուրջյանի անվան արվեստի դպրոցի, ինչպես նաև պատանի երաժիշտ Դավիթ Հակոբյանի համար:

Երիտասարդության հարցերի ոլորտում՝

ՀՀ և արտերկրի հետ համագործակցության ծրագրի շրջանակներում Արցախի երիտասարդական կառույցների ներկայացուցիչները մասնակցել են 7 տարաբնույթ մրցույթների ՀՀ-ում և ՌԴ-ում:

Երիտասարդական հասարակական նախաձեռնությունների աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսավորվել են 8 ՀԿ-ների փորձագիտությունն անցած 10 երիտասարդական ծրագրեր:

Տեղեկատվական ոլորտում երիտասարդության ներգրավման ծրագրի շրջանակներում Տեղեկատվական տեղխնոլոգիաների զարգացման կենտրոնը մայրաքաղաքում և բոլոր շրջկենտրոններում անց է կացրել 13 սեմինարներ և վարպետության դասեր:

Երիտասարդության հոգևոր-մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության ծրագրի շրջանակներում ապահովվել է Արցախի երիտասարդական և ուսանողական կառույցների ներկայացուցիչների մասնակցությունը 10 միջոցառումների Ստեփանակերտում, Շուշիում և հանրապետության 7 համայնքներում:

Բանակ-հասարակություն կապերի ամրապնդման նպատակով ՊԲ զորամասերում իրականացվել է քարոզչական ծրագիր, կազմակերպվել է սպա հոգեբանների հավաք-խորհրդակցություն:

Առողջ ապրելակերպի, ընտանեկան արժեքների քարոզչության ծրագրի շրջանակներում Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի մերձակա տարածքում, 16 ընտանիքների ընդգրկմամբ, կազմակերպվել է «Ընտանեկան ճամբար – 2012» ծրագիրը:

Երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպման ծրագրի շրջանակներում հանրապետության 3 շրջանների 4 համայնքներում կազմակերպվել են տարաբնույթ 4 միջոցառումներ:

Հանրապետության երիտասարդական ներուժի զարգացման ու համայնքային կյանքի ակտիվացման նպատակով կազմակերպվել է «Արցախի Երիտֆորում-2012» ծրագիրը:

<u>Սպորտ</u>

2012թ. ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացվել են հետևյալ մարզական միջոցառումները:

Կազմակերպվել և անց են կացվել 38 հանրապետական մարզական միջոցառումներ՝ 1969 մարզիկների մասնակցությամբ:

Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում անց են կացվել շրջանային (քաղաքային) 127 մարզական միջոցառումներ՝ 7800 մարզիկների մասնակցությամբ:

Անց են կացվել նաև մարզական զանգվածային միջոցառումներ՝ «Առողջ ապրելակերպ», «Լավագույն մարզական ընտանիք» փառատոն, «Հուսո գավաթ» ֆուտբոլային փառատոն, «ԼՂՀ Ազգային ժողովի գավաթի» խաղարկություն, հաշմանդամ ազատամարտիկների միջև սեղանի թենիսի, շախմատի և նարդու հանրապետական մրցումներ, երիտասարդ հաշմանդամների միջև բոչայի բաց առաջնություն, կրոսավազք՝ նվիրված Արցախի ազգային ազատագրական պայքարում զոհված ազատամարտիկների հիշատակին, մարզական զանգվածային միջոցառումներ նվիրված ԼՂՀ ֆիզկուլտուրնիկի օրվան:

2012թ. ԼՂՀ 9 լավագույն ճանաչված մարզական ընտանիք մասնակցել են ՀՀ Նախագահի մրցանակի համար կազմակերպված մրցույթին, որտեղ տարբեր մրցաձևերում 3 ընտանիք գրավել են մրցանակային 1-ին տեղերը:

2012թ. ավելացել է ԼՂՀ մարզիկների մասնակցությունը Հայաստանի Հանրապետության, Եվրոպայի, աշխարհի առաջնություններին և միջազգային մրցաշարերին: ԼՂՀ թվով 889 մարզիկներ 92 անգամ մասնակցել են ՀՀ թիմային և անհատական առաջնություններին, մրցաշարերին ու գավաթի խաղարկություններին, 27 անգամ (139 հոգի)՝ միջազգային մրցաշարերին, 11 անգամ (34 հոգի)՝ Եվրոպայի, 11 անգամ (47 հոգի)՝ աշխարհի առաջնություններին և գրավել 103 առաջին, 80՝ երկրորդ, 80՝ երրորդ մրցանակային տեղեր:

Հաջողություններ են արձանագրվել նաև խաղային մարզաձևերում: Հայաստանի Հանրապետության առաջնություններում 1-ին տեղ է գրավել տղամարդկանց, 3-րդ տեղ՝ կանանց բասկետբոլի թիմը, վոլեյբոլի առաջնություններում՝ 2-րդ տեղ է գրավել տղամարդկանց և 3-րդ տեղ՝ կանանց հավաքական թիմը:

Ընդհանրացվել են Ստեփանակերտ քաղաքի և շրջանների կատարած մարզական զանգվածային աշխատանքների ստուգատես-մրցույթի արդյունքները, որտեղ 1-ին տեղ է գրավել ք.Ստեփանակերտը, 2-րդ տեղ՝ Ասկերանի, 3-րդ տեղ՝ Շուշիի շրջանը:

2 ենթախմբերով (քաղաքային և շրջանային) անց է կացվել «ԼՂՀ լավագույն մանկապատանեկան մարզադպրոց» ստուգատես-մրցույթ:

2012թ. ԼՂՀ-ում գործել են 20 մարզական ֆեդերացիաներ, որոնցից 18-ի հետ կնքվել են պայմանագրեր՝ պետական բյուջեից ֆինանսավորվելու համար: Հատկացված գումարների նպատակային օգտագործումը մշտապես վերահսկվել է:

Մարզադպրոցները մարզիչ-մանկավարժներով համալրելու նպատակով 2012թ. կնքվել են պայմանագրեր պետպատվերի շրջանակներում սովորող 4 ուսանողների հետ՝ ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտում սովորելու համար:

2012թ. կենտրոնացված ձևով ձեռք են բերվել մարզագույք և մարզահագուստ, որոնք բաժանվել են մարզադպրոցների, մարզական ֆեդերացիաների և կազմակերպությունների:

Տարեվերջին ամփոփվել են 2012թ. մարզական նվաճումները, ի հայտ բերվել լավագույն մարզիկները, հավաքական թիմերը և նրանց մարզիչները: Հայաստանի Հանրապետության, Եվրոպայի, աշխարհի առաջնություններում և գավաթի խաղարկություններում մրցանակային տեղեր գրաված մարզիկները և նրանց մարզիչները խրախուսվել են դրամական պարգևներով:

<u>Տարածքային կառավարում և տեղական ինքնակառավարում</u>

2012 թվականի ընթացքում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

ԼՂՀ շրջաններում հանրային ծառայությունների հասանելիության աստիճանի բարձրացման առնչությամբ շարունակվել են աշխատանքները կոմունալ ծառայություններ մատուցող կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտում գոյություն ունեցող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման ուղղությամբ, ուղիներ են նախանշվել և միջոցներ են ձեռնարկվում դրանց գործունեությունը և ոլորտի կառավարումը բարելավելու համար:

Շարունակվել է աշխատանքների իրականացումը՝ կապված պետության տարածքային քաղաքականության իրագործման և տեղական ինքնակառավարման համակարգի գործունեության արդյունավետության հետագա բարձրացման գործընթացի ապահովման հետ:

2012 թվականին համակարգվել և վերահսկվել է ԼՂՀ շրջանների խորհուրդների նիստերի անցկացումը, ապահովվել դրանցում կառավարության անդամների և այլ պատասխանատուների մասնակցությունը: Ուսումնասիրվել և ԼՂՀ կառավարության արտագնա նիստերում քննարկվել են ԼՂՀ շրջանների վարչակազմերի ղեկավարների հաշվետվությունները: Անցկացված նիստերի արդյունքներով որոշվել են շրջանների

սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները, հանձնարարականներ մշակվել դրանց կենսագործման ուղղությամբ:

Մշակվել և կառավարության նիստերում հաստատվել են հանրապետության մի շարք համայնքների ղեկավարների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, 35 համայնքների ղեկավարների կամ ավագանու անդամների հերթական կամ արտահերթ ընտրություններ անցկացնելու, ինչպես նաև ԼՂՀ Նախագահի 2012թ. հուլիսի 19-ի հերթական ընտրության նախապատրաստման և անցկացման գործընթացում ընտրական հանձնաժողովներին աջակցելու մասին որոշումներ, միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի Ստեփանակերտի քաղաքապետարանը և շրջվարչակազմերը անհրաժեշտ տեխնիկական-կազմակերպական աշխատանքներ իրականացնեն և աջակցություն ցուցաբերեն ընտրական հանձնաժողովներին՝ վերոնշյալ ընտրություններն օրենսդրության սահմաններում և կազմակերպված անցկացնելու համար:

«Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի դրույթներին համապատասխան և իրավական հսկողության լիազոր մարմնի ու պետական վերահսկողության իրականացնող բարձրագույն մարմնի լիազորությունների շրջանակներում ստուգումներ են կատարվել հանրապետության շուրջ 35 համայնքներում համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքների ավագանիների լիազորությունների իրականացման դրվածքի վերաբերյալ, ստուգման արդյունքները քննարկվել են շրջանների խորհուրդների նիստերում, միջոցներ են ձեռնարկվել բացահատված թերությունները վերացնելու համար:

2012 թվականի մարտ-ապրիլ ամիսներին համայնքի ղեկավարների ու ավագանու աշխատանքների հրապարակայնությունը և բնակչության առջև հաշվետու լինելն ապահովելու նպատակով հանրապետության բոլոր 226 համայնքներում գործող օրենսդրության համաձայն ներկայացվել են համայնքների ղեկավարների հաշվետվություններ: Ապահովվել է այդ հաշվետվությունների ներկայացմանը կառավարության անդամների և կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարների մասնակցությունը, վերլուծվել և ամփոփվել են հաշվետվությունների ժամանակ բարձրացված հիմնախնդիրները և դրանք ուղարկվել համապատասխան իրավասու մարմինների՝ ընթացքավորելու համար:

Վերլուծություններ են իրականացվել և շարունակվել է աշխատանքների իրականացումը տեղեկատվական բազաների ստեղծման ուղղությամբ՝ ըստ համայնքների և շրջանների բնակչության թվաքանակի (ըստ տարիքային խմբերի), տեղական բյուջեների

(ըստ եկամտատեսակների և ծախսերի), գյուղատնտեսական նպատակային հողերի (ըստ հողատեսքերի, հարկերի և վարձավճարների):

Մշակվել են «Ստեփանակերտում տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների նախագծերը:

Վարչատարածքային բարեփոխումների շրջանակում համայնքների խոշորացման և տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքներն իրականացվել են հիմնականում փոքր և միջին թվաքանակի բնակչություն ունեցող համայնքներում՝ ոչ թե համայնքների մեխանիկական խոշորացման, այլ դրանցում բնակչության աճին նպաստող սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, բարոյահոգեբանական և այլ գործոնների խթանմանը միտված միջոցառումների մշակման և իրականացման համատեքստում:

<u>Պետական գույքի կառավարում և մասնավորեցում</u>

2012 թվականին պետական գույքի պահպանման, արդյունավետ կառավարման, տնօրինման և օգտագործման պետական միասնական քաղաքականության իրականացման նպատակով շարունակվել է կատարելագործվել պետական գույքի հաշվառման միասնական համակարգը, որը լրամշակվել և արդիականացվել է՝ ապահովելով տեղեկությունների հավաստիությունն ու տվյալների հավաքագրման (նաև տրամադրման) անընդհատությունը: Օգտագործելով տվյալների բազայում առկա տեղեկատվությունը՝ շարունակվել են աշխատանքները պետական գույքի նկատմամբ սեփականության և այլ իրավունքների գրանցման ապահովման ուղղությամբ: Անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկվել պետական սեփականություն հանդիսացող գույքի համատարած և ամբողջական գույքագրման ուղղությամբ:

Մշակվել և ընդունվել է «ԼՂՀ կառավարության 2008թ. փետրվարի 26-ի N 76 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ կառավարության որոշումը, որով կառնակարգվել են հիմնարկին կամ կազմակերպությանն ամրացված, կազմակերպության կամ ընկերության սեփականություն հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցների օտարման ներկայացման և տվյալ համակարգի աշխատողներին օտարման կարգը:

Ընդունվել են լուծարման ենթակա ընկերությունների լուծարման մասին ԼՂՀ կառավարության որոշումներ և շարունակվել են լուծարման ընթացքում գտնվող ընկերությունների լուծարման գործընթացի ավարտմանը նպաստող միջոցառումներ, որի

արդյունքում 2012թ. ընթացքում լուծարման աշխատանքներն ավարտվել են 3 ընկերություններում:

Բյուջետային քաղաքականություն

2012 թվականի ընթացքում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված է եղել բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացների իրականացմանը:

ԼՂՀ վարչապետի 2012 թվականի ապրիլի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2013 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 122-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2013-2015 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման ու մեթոդաբանության ոլորտում 2012 թվականին կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների անցկացմանը:

Հաշվետու տարում մշակվել են հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտեր, մասնավորապես՝ հաստատվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզավորման նոր կարգը և կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության հաշվապահական հաշվառման նոր հաշվային պլանը, որն ամբողջովին համապատասխանեցվել է ԼՂՀ-ում գործող ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ներ են դրվել «Աուդիտի և որակի վերահսկողության միջազգային ստանդարտները», որոնց ընդունմամբ հիմք դրվեց արցախյան և օտարերկրյա կազմակերպությունների համար արտաքին աուդիտի միասնական՝ միջազգայնորեն ընդունելի օրենսդրական դաշտի ստեղծման և կատարելագործման համար:

ԼՂՀ պետական կառավարման մարմինների, պետական ոչ առևտրային կազմակերպությունների և համայնքների հաշվապահների համար պարբերաբար կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ և դասընթացներ, որոնց ընթացքում

ներկայացվել են 2013թ. հունվարի 1-ից հետո կիրառվող հաշվապահական հաշվառման հաշվային պլանում ներառված հաշիվների կառուցվածքը և կապը ֆինանսական հաշվետվությունների առանձին ձևերի հետ, պարզաբանվել են ֆինանսական հաշվետվությունների կազմման սկզբունքները և առանձնահատկությունները, լիազոր մարմինների հաշվապահների կողմից ՊՈԱԿ-ների հաշվետվություններում արտացոլված տվյալների ստուգման մեթոդիկան և հաշվապահական հաշվառման վերաբերյալ մի շարք այլ հարցեր:

Գնումների գործընթացի կարգավորման ոլորտում 2012թ. ընթացքում գնումների համակարգի արդյունավետության բարձրացման և «Գնումների մասին» ԼՂՀ օրենքից բխող ենթաօրենսդրական դաշտի հստակեցման նկատառումներից ելնելով՝ համապատասխան փոփոխություններ կատարվեցին պետական գնումների գործընթացը կարգավորող օրենսդրության մեջ:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների կատարման նպատակով 2012թ. դեկտեմբերի 27-ի N 938-Ն որոշմամբ հաստատվեց «Գնումների մասին ԼՂՀ օրենսդրության իմացության գնահատման նպատակով թեստավորման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշումը:

Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերով հաստատվել են գնումների պլանի լրացման կարգը և ներկայացման ժամկետները, ինչպես նաև գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգը:

Գնումների բնագավառում պատվիրատուների մասնագիտական գիտելիքների բարձրացման և կատարելագործման նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի միջոցով «Գնումների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված պատվիրատուների գնումների համակարգողների համար կազմակերպվել են դասընթացներ՝ մոտ 110 անձանց ընդգրկմամբ:

<u>Հարկային քաղաքականություն</u>

2012 թվականին շարունակվել են աշխատանքները հսկողական գործընթացների արդյունավետության բարձրացման, օրենսդրական դրույթների կատարելագործման, հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման, ինչպես նաև համակարգի արդիականացման ուղղություններով, որոնց արդյունքում էլ հաջողվեց կատարել պետական բյուջեի հարկային եկամուտների, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով մուտքերը:

Եկամուտների հավաքագրման գործում նշանակալի դեր է ունեցել 2011 թվականի հուլիս ամսից գործողության մեջ դրված «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը:

Հաշվետու տարում իրականացվել են բյուջեների հետ փոխհարաբերությունների ճշտության թվով 180 ստուգում՝ նախորդ տարվա 298 ստուգման դիմաց կամ 40 %-ով պակաս: Նշված ստուգումներով հաշվարկված պարտավորությունները կազմել են 852 մլն դրամ՝ նախորդ տարվա 912 մլն դրամի դիմաց: Հաշվետու տարում կատարված ստուգումներով բյուջե մուտքագրված գումարները կազմել են 515 մլն դրամ՝նախորդ տարվա 365 մլն դրամի դիմաց, իսկ ընթացիկ և նախորդ տարիներին կատարված բոլոր ստուգումների մասով բյուջե է մուտքագրվել 828 մլն դրամ՝ նախորդ տարվա 568 մլն դրամի դիմաց: Մեկ ստուգմամբ հայտնաբերված միջին գումարը նախորդ տարվա համեմատ աճել է 55 %-ով՝ կազմելով 4 մլն 730 հազ. դրամ:

Ստուգումների թվաքանակի նվազումն ու զուգահեռաբար ստուգմամբ հաշվարկված միջին գումարների աճը պայմանավորված են կառավարության որդեգրած՝ ընդհանուր, համատարած ստուգումներից առավել նպատակային, հասցեական ստուգումների անցման քաղաքականության կիրառմամբ:

Իրականացված ստուգումների ժամանակ լուրջ ուշադրություն է դարձվել ֆիզիկական անձանց վճարված ստվերային եկամուտների բացահայտմանը, որի արդյունքում հաշվետու տարում ստուգումներով լրացուցիչ հաշվարկվել են 60 մլն դրամ պակաս ցույց տրված պարտադիր սոցիալական ապահովության վճարների և եկամտահարկի գումարներ՝ բացահայտելով ստվերում գտնվող 260 մլն դրամ աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ: Վերահսկողական միջոցառումներին զուգընթաց անմիջականորեն տեղերում իրականացվել են նաև բացատրական աշխատանքներ: Մասնավորապես, հաշվարկ-հաշվետվությունների ընդունման ժամանակ կատարվել է աշխատավարձի ֆոնդերի ուսումնասիրություն՝ ելնելով ոլորտային առանձնահատկություններից, և ըստ անհրաժեշտության, հարկ վճարողներին առաջարկվել կատարել ճշտումներ:

Ստվերային երևույթների նկատմամբ իրականացվող միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով հոկտեմբեր ամսում հաստատվեց ռիսկային ոլորտներում հարկային հսկողության ուժեղացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը, նշանակվեցին ծրագրի կոորդինացման պատասխանատուներ, դիտարկումների հիման վրա ընտրվեցին տնտեսության առավել ռիսկային ոլորտները և

համատարած հսկողական միջոցառումներ նախաձեռնվեցին՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման, ձեռնարկատիրական գործունեության առարկաների գրանցման ճշտության, գնապիտակների առկայության և գրանցման գրքերում նշված գների հետ դրանց համապատասխանության, հանրապետության տարածք ներմուծումների մասով:

Իրականացված միջոցառումների արդյունքում թվով 97 սուբյեկտների մոտ արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման դեպքեր, 11 սուբյեկտների մոտ ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման փաստ, 21 սուբյեկտների մոտ՝ վաճառքի ցուցադրված ապրանքների վրա գնապիտակների բացակայության կամ գրանցման գրքերում գրանցված գների հետ դրանց անհամապատասխանության դեպքեր:

Կամերալ հսկողության շրջանակներում հաշվետու տարում իրականացվել են հարկ վճարողների 8600 հաշվարկ-հաշվետվությունների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 1050 խախտումների մասով հարկ վճարողներին առաջարկվել է կատարել ճշտումներ, որոնցից 908-ի մասով հարկատուների կողմից դրանք կատարվել են՝ զերծ պահելով ստուգումներով առաջադրվելիք լրացուցիչ պարտավորություններից:

Հսկողական միջոցառումների արդյունավետության բարձրացման նպատակով հաշվետու տարում Գետավան-Վարդենիս-Քարվաճառ և Սանասար-Խնձորեսկ տարածքներում գործող հսկիչ կետերում տեղադրվել են տեսախցիկներ, որոնց միջոցով կատարվում է շուրջօրյա տեսահսկում:

2012 թվականին առաջնահերթությունների շարքում էր հարկային օրենսդրության կատարելագործումը: Այդ նպատակով մշակվել ու Ազգային Ժողովի քննարկմանն է ներկայացվել հարկային օրենսդրությունում փոփոխություններ նախատեսող թվով 12 օրինագիծ, որոնք կիրառության մեջ են դրվել 2013 թվականի հունվարի 1-ից:

Օրենսդրական փոփոխություններն ուղղված էին՝

- հարկման դրույքաչափերի օպտիմալացմանը, որն էլ իր հերթին նպատակ ունի համահունչ դարձնել հարկերի դրույքաչափերը, ինչպես նաև հարկի ֆիսկալ գործառույթի ապահովմամբ բավարար դարձնել պետության ֆինանսական կարողությունները և հարկաբյուջետային քաղաքականության վարման միջոցով իրականացնել արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականություն, արդյունքում՝ բարելավելով նաև ներդրումային դաշտն ու նպաստելով ձեռնարկատիրության եկամուտների հետագա աճին.

- վարչարարության մեղմացմանը, պարզեցմանն ու ոլորտային առանձնահատկություններով պայմանավորված, հարկային արտոնությունների

սահմանմանը, ինչպես նաև փոքր ձեռնարկատիրության ոլորտում հարկման պարզ մեխանիզմների, մասնավորապես արտոնագրային և հաստատագրված վճարների կիրառմանը,

- օրենսդրական բացերի շտկմանը, հարկային «սողանցքների» վերացմանն ու չարաշահումների սահմանափակմանը:

Օրենսդրական կատարելագործմանը զուգընթաց զգալի աշխատանքներ են տարվել հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման առումով:

Մասնավորապես, հարկային օրենսդրության ճիշտ ընկալման և կիրառման նպատակով հարկ վճարողների հետ հունվար, մարտ ամիսներին հանրապետության բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել են 9 սեմինար-խորհրդակցություններ, պարզաբանումներ տրվել 45 հարկ վճարողների գրավոր հարցադրումներին, տեղերում կազմակերպվել 5200 հարկ վճարողների ընդունելություններ: Հարկային մարմնի պաշտոնական կայք էջում տեղադրվել է հաճախ թույլ տրվող սխալների շտեմարան:

Տարվա ընթացքում զանգվածային լրատվամիջոցներով և հարկային մարմնի պաշտոնական կայքէջի միջոցով պարբերաբար տեղեկատվություն է տրամադրվել հարկային եկամուտների, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների հավաքագրման ցուցանիշների, իրականացված ստուգումների, հարկ վճարողների գործունեության կասեցումների, օպերատիվ հետախուզական բացահայտումների և համակարգում կազմակերպվող մրցույթների վերաբերյալ: Տրվել են նաև իրազեկման, նախազգուշական, քարոզչական բնույթի հայտարարություններ: Հարկային համակարգի օրենսդրական, կառուցվածքային, վարչարարական նորությունները հանրությանն են ներկայացվել նաև «Հարկատու» պարբերականի միջոցով:

Հարկային բարեփոխումների ընթացքին հանրության մասնակցությունն ապահովելու նպատակով նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Արցախի գործարարների միության, հարկային մարմնին կից գործող հասարակական-խորհրդակցական մարմնի, հանրապետությունում գործող հարկ վճարողների, այդ թվում՝ խոշոր հարկ վճարողների հետ, կազմակերպվել են հարկային ոլորտին առնչվող օրինագծերի շուրջ քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են դրանց նախաձեռնման անհրաժեշտությունը, ակնկալվող արդյունքները, տրվել պարզաբանումներ հարկ վճարողների կողմից բարձրացված հարցերին:

2012 թվականին կառավարության ուշադրության կենտրոնում շարունակում էին մնալ համակարգի արդիականացման և տեխնիկական հագեցվածության ապահովման աշխատանքները:

Տեխնիկական նորույթների ներդրման հետ մեկտեղ շարունակական ուշադրության տակ են պահվել կադրերի մասնագիտական պատրաստվածության, պաշտոնական առաջխաղացման ապահովումը և նոր փորձառու կադրերով համակարգի համալրումը:

Անշարժ գույքի կադաստր

2012 թվականի ընթացքում ապահովվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի փետրվարի 8-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող անշարժ գույքի կադաստրի զարգացման 2012 թվականի համալիր ծրագիրը հաստատելու մասին» N 53-Ա որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացումն ամբողջությամբ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին անշարժ գույքի կադաստրի ոլորտի կողմից իրականացվել են 10 ծրագրային աշխատանքներ, այդ թվում.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում համայնքների բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման և կադաստրային քարտեզագրման աշխատանքներ:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են բնակավայրերի 1:2000 մասշտաբի տեղագրական հանութագրման աշխատանքներ 995 հեկտարի վրա, 5504 անշարժ գույքի միավորի կադաստրային քարտեզագրման աշխատանքներ և Հադրութի շրջանում խտացման ցանցի 70 կետերի տեղադրման, չափման և հավասարակշռման աշխատանքներ:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրական անվանումների հաշվառման և գրանցման աշխատանքներ, ընդ որում հաշվառման աշխատանքներ են իրականացվել 33, իսկ գրանցման աշխատանքներ՝ 2 համայնքներում:

3. Հողի և դրա վրա գտնվող շենքերի և շինությունների, անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացման աշխատանքներ, որոնց արդյունքում կատարվել է անշարժ գույքի շուկայի 2011-2012թթ. եռամսյակային, կիսամյակային և տարեկան վերլուծություն: Ծրագրի շրջանակներում իրականացվել են անշարժ գույքի միասնական գնային իրավիճակի համակարգված դիտարկումների իրականացում և

վերլուծություն, որոնց արդյունքները պարբերաբար հրապարակվել են մամուլում՝ հասարակության լայն շերտերին շուկայի իրավիճակի մասին իրազեկելու նպատակով:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների և համայնքների վարչական սահմանների ամրացման աշխատանքներ՝ Հադրութի շրջանի 30 համայնքներում:

5. Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների և մասնավորեցվող /սեփականաշնորհվող/ անշարժ գույքի և ինքնակամ կառույցների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքներ՝889 միավոր պետական սեփականության և 64 միավոր համայնքային սեփականության նկատմամբ:

6. Գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքներ՝ 263 միավորի նկատմամբ հաշվառման և 552 միավորի նկատմամբ գրանցման աշխատանքներ:

7. Անշարժ գույքի կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ներդրման, զարգացման և տեղեկատվական բանկի ստեղծման նպատակով իրականացվել են 4804 կադաստրային գործերի տվյալների մուտքագրում և 229324 էջերի տեսաներածում:

8. Հողերի հաշվառման և հողային հաշվետվությունների կազմման աշխատանքներ՝ Ասկերանի և Մարտունու շրջանների 20 համայնքներում:

9. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանապարհային ցանցի քարտեզագրման աշխատանքներ՝քարտեզագրվել է 200 կմ և ներդրվել է հատուկ թվայանացման նավիգացիոն համակարգ 2700 կմ ճանապարհային ցանցի համար:

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների հաշվին կոմիտեի համակարգի գծով իրականացվող ծախսեր:

2012 թվականի արդյունքներով ընդհանուր առմամբ կատարվել են 8969 միավոր պետական գրանցման աշխատանքներ և տրամադրվել է 7426 միավոր անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվություն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց:

Միաժամանակ իրականացվել են նաև մի շարք աշխատանքներ, որոնք ուղղված են հանրապետությունում կադաստրի ոլորտի զարգացմանը: Դրանք են՝

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կադաստրային քարտեզագրումն ավարտված համայնքներում (բացի՝ Ստեփանակերտ քաղաքից) անշարժ գույքի

նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման ժամանակ, իրավունք հաստատող փաստաթղթերում նշված չափի 20 տոկոսից ավելի հողամաս օգտագործելու պատճառով իրավունքի պետական գրանցում չստացած բնակելի տների և դրանց կառուցման ու սպասարկման համար հատկացված հողամասերի պետական գրանցման աշխատանքները: Տարվա կտրվածքով առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման ժամանակ դուրս մնացած 46 անշարժ գույքի միավորների նկատմամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում, որի արդյունքում գյուղական համայնքների բնակիչներին անվճար կտրամադրվեն սեփականության իրավունքի գրանցման վկայականներ.

- շարունակվել են աշխատանքները վերահսկողության բնագավառում՝ հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ: 2012 թվականին տեսչական ստուգումներ են իրականացվել ԼՂՀ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Շուշիի, Շահումյանի, Քաշաթաղի շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում: Արձանագրվել են ԼՂՀ հողային օրենսգրքի և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերի պահանջների խախտումներ, որոնք վերացնելու համար տրվել են համապատասխան ցուցումներ:

2012 թվականի ընթացքում իրականացվել են 6982.4 հա վարձակալության տրամադրված գյուղնշանակության հողերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման աշխատանքներ, որից Ասկերանի շրջանում՝ 1686.2 հա, Մարտունու շրջանում՝ 1897.9 հա, Մարտակերտի շրջանում՝ 253.5 հա, Հադրութի շրջանում՝ 839.7 հա, Շուշիի շրջանում՝ 445.6 հա, Շահումյանի շրջանում՝ 2.5 հա, Քաշաթաղի շրջանում՝ 1857.0 հա:

2012 թվականին շարունակվել են շարժական գույքի գրավի իրավունքի, լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցման աշխատանքները: Գրանցվել է 28 միավոր շարժական գույքի նկատմամբ գրավի իրավունքը:

2012 թվականին շարունակվել է ՀՀ և ԼՂՀ կադաստրի պետական կոմիտեների միջև համագործակցությունը: ՀՀ կադաստրի պետական կոմիտեի մասնագետների կողմից Տեղեկատվական կենտրոնում ներդրվել է անշարժ գույքի վերաբերյալ տվյալների որոնման նոր ծրագիրը, ինչպես նաև հանրապետության հողային հաշվեկշիռ վարելու ծրագիրը:

2012 թվականին շարունակվել է ԼՂՀ տարածքում գտնվող պատմամշակութային օբյեկտների գրանցման գործընթացը:

Հողօգտագործման բնագավառում համակարգին առնչվող հարցերի վերաբերյալ պարբերաբար մեթոդական օգնություն է ցուցաբերվել համայնքների ղեկավարներին և համապատասխան մասնագետներին:

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի եկամուտների կատարման մասին ըստ առանձին հարկատեսակների

=

(հազար դրամ)

Եկամտատեսակ	պլան	փաստ	%
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**29643535.2**	**28755606.1**	**97.0**
որից			
Ա. ԸՆԹԱՑԻԿ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**28783535.2**	**27755606.1**	**96.4**
որից			
1.Հարկային եկամուտներ	**18406000.0**	**18540882.6**	**100.7**
այդ թվում՝			
ա)ավելացված արժեքի հարկ	9654200.0	9620891.3	99.7
բ)ակցիզային հարկ	310100.0	227724.2	73.4
գ)շահութահարկ	1756000.0	1830689.1	104.3
դ)եկամտահարկ	2406000.0	2414741.7	100.4
ե)հաստատագրված վճար	483500.0	490760.5	101.5
զ)առևտրի հարկ	1594000.0	1728956.2	108.5
է)բնօգտագործման և բնապահպանական վճար	750000.0	753280.9	100.4
ը)մաքսահանույթներ ավտոճանապարհների նորոգման համար	650200.0	651615.2	100.2
թ)այլ հարկային եկամուտներ	75436.2	78499.0	104.1
ժ)ռոյալթի	650000.0	654000.0	100.6
ի)կոնցեսիոն վճար		6454.1	
լ)հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար	76563.8	83270.4	108.8
2.Պետական տուրք	**459635.2**	**401809.0**	**87.4**
3.Պարտադիր սոցապահովության վճարներ	**7304000.0**	**7373126.0**	**100.9**
4.Այլ եկամուտներ	**2613900.0**	**1439788.5**	**55.1**
ա)իրավաբ-կան անձանց բաժնետ-կան կապիտալում կատարված ներդր-ներից ստացվող շահաբաժինների տեսքով մասհանումներ	1000000.0	327637.9	32.8
-շահաբաժիններ	900000.0	290135.7	32.2
-ժամանակավոր ազատ մնացորդների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող	100000	37502.2	37.5
բ)պետ. Հիմ-ների հաշ-կշռում հաշվառվող գույքի, համայնք-րի վարչ-ն տարածքից դուրս գտնվող պետ. Սեփ-թյուն համարվող հողերի վարձ-ման և օգտագ-ման դիմաց գանձվող վարձ.վճարներ	302000.0	151333.7	50.1
-գույքի վարձավճար	2000.0	3114.9	155.7
-հողի վարձավճար	300000.0	148218.8	49.4
գ.)բյուջեից տրված վարկերի տոկոսավճարներ	5000.0	14351.6	287.0
դ)իրավախախտումների համար գործադիր և դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքեր	305000.0	228355.7	74.9
ե)այլ եկամուտներ	635875.6	457042.9	71.9
որից			
ռադիոհաճախականության օգտագործման դրամց վճարներից	240491.0	240034.2	99.8
է)կադաստրի գործառնություններից եկամուտներ	222024.4	193152.7	87.0
ը)ամատառանյութի իրացումից մուտքեր	144000.0	67914.0	47.2
Բ.Պաշտոնական դրամաշնորհներ	**860000.0**	**1000000.0**	116.3
Տրջպետական վարկ	**35943572.4**	**35943572.4**	**100.0**

Ծանոթություն. *եկամուտների մեջ ներառված են՝*

1. «ԼՂՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների նախահաշվի ծրագրային և փաստացի ցոցանիշները՝ համապատասխանաբար 473900.0 հազար դրամ և 398354.8 հազար դրամ:
2. 2012 թ. գործատուների սոտ փաստացի հաշվարկված և վճարված սոցիալական ապահովության վճարները (հիվանդության թերթիկ և այլն) 443243.3 հազար դրամ:

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հեռապատճեն՝ Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ
(տեղեկագրության դասակարգում)

	նախատեսված հատկացումները	ճշտված հատկացումները	կատարողականը	%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**70320000.0**	**70924469.3**	**67343806.5**	**95.8**
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**56746100.80**	**54887060.7**	**51569587.5**	**94.0**
այդ թվում՝				
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	**13349888.6**	**13519938.3**	**12961637.1**	**95.9**
այդ թվում՝				
Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարները	11832194.0	12004048.2	11513199.5	95.9
Փաստացի սոցիալական ապահովության վճարներ	1517694.6	1515890.1	1448437.6	95.6
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	**8944909.6**	**9998834.0**	**9182854.1**	**91.8**
այդ թվում՝				
Շարունակական ծախսեր	1248847.3	1311890.9	1099776.2	83.8
Գործուղումների և շրջագայությունների ծախսեր	357426.2	423126.8	338537.5	80.0
Պայմանագրային այլ ծառայությունների ձեռքբերում	5705220.6	6367031.2	6141404.9	96.5
Այլ մասնագիտականծառայությունների ձեռքբերում	142754.2	124757.5	53675.1	43.0
Ընթացիկ նորոգում և պահպանում(ծառայություններ և նյութեր)	184009.3	327732.1	214749.5	65.5
Նյութեր (ապրանքներ)	1306652.0	1444295.5	1334710.9	92.4
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	**1300000.0**	**1200000.0**	**1127185.4**	**93.9**
այդ թվում՝				
Ներքին տոկոսավճարներ	1300000.0	1200000.0	1127185.4	93.9
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	**4606747.3**	**4155808.1**	**3875617.9**	**93.3**
այդ թվում՝				
Սուբսիդիաներ պետական կազմակերպություններին	4606747.3	4155808.1	3875617.9	93.3
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	**5255864.3**	**5348829.1**	**4996847.9**	**93.4**
այդ թվում՝				
Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին	80.0	80.0	36.3	45.4
Ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին	5255784.3	5348749.1	4996811.6	93.4
որից՝				
Ընթացիկ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին	21000.0	21543.7	21543.7	100.0
Պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող դոտացիաներ	1780644.4	1780644.4	1570170.1	88.2
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	263720.0	250000.0	160319.0	64.1
Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	56600.0	56600.0	55248.5	97.6
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	3133819.9	3239961.0	3189530.3	98.4
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	**18146372.1**	**17365972.0**	**16496364.6**	**95.0**
այդ թվում՝				
Սոցիալական օգնության դրամական արտահայտությամբ նպաստներ (բյուջեից)	18146372.1	17365972.0	16496364.6	95.0
այդ թվում՝				

	նախատես-ված հատկացում-ները	ճշտված հատկացում-ները	կատարողա-կանը	%
Հիվանդության և հաշմանդամության նպաստներ բյուջեից	177500.0	177500.0	177480.1	100.0
Մայրության նպաստներ բյուջեից	694491.2	694491.2	560160.8	80.7
Երեխաների նպաստներ բյուջեից	3563120.0	3493120.0	3344854.0	95.8
Գործազրկության նպաստներ բյուջեից	128700.0	128700.0	84971.7	66.0
Հուղարկավորության նպաստներ բյուջեից	320234.0	320234.0	259766.5	81.1
Կրթական,մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	143457.9	142540.7	135880.8	95.3
Բնակարանային նպաստներ բյուջեից	42360.0	40160.0	35620.1	88.7
Այլ նպաստներ բյուջեից	3575759.0	3236476.1	2846081.0	87.9
Կենսաթոշակներ	9500750.0	9132750.0	9051549.6	99.1
այդ թվում՝				
Կենսաթոշակներ	9500750.0	9132750.0	9051549.6	99.1
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	**5142318.9**	**3297679.2**	**2929080.5**	**88.8**
այդ թվում՝				
Նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին	129645.3	170955.0	163882.9	95.9
Հարկեր, պարտադիր վճարներ և տուրքեր, որոնք կառավարման տարբեր մակարդակների կողմից կիրառվում են միմյանց նկատմամբ	29482.3	42892.1	35648.5	83.1
Այլ ծախսեր	2983191.3	3012261.2	2710625.5	90.0
Պահուստային միջոցներ	2000000.0	71570.9	18923.6	26.4
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**13573899.2**	**16037408.6**	**15774219.0**	**98.4**
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	**13695099.2**	**16158608.6**	**15871834.2**	**98.2**
այդ թվում՝				
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	**13695099.2**	**16158608.6**	**15871834.2**	**98.2**
այդ թվում՝				
ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**12245098.9**	**14554541.3**	**14396161.5**	**98.9**
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ	**1020687.0**	**1157380.0**	**1054773.1**	**91.1**
այդ թվում՝				
Տրանսպորտային սարքավորումներ	316256.4	549530.5	505852.9	92.1
Վարչական սարքավորումներ	97512.0	226217.2	195745.4	86.5
Այլ մեքենաներ և սարքավորումներ	606918.6	381632.3	353174.8	92.5
ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	**429313.3**	**446687.3**	**420899.6**	**94.2**
այդ թվում՝				
Աճեցվող ակտիվներ	30000.0	30000.0	8803.9	
Ոչ նյութական հիմնական միջոցներ	2300.0	2300.0	1190.0	51.7
Գեոդեզիական-քարտեզագրական ծախսեր	72013.3	72013.3	72009.6	100.0
Նախագծահետազոտական ծախսեր	325000.0	342374.0	338896.1	99.0
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԾԱՎՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	**-121200.0**	**-121200.0**	**-97615.2**	**80.5**

Ծանոթություն.

1.<Ի՛ ԼՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին> Ի՛ ԼՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն ըստ հոդվածների ներառված են արտաբյուջետային հաշիվներ ունեցող բյուջետային հիմնարկների արտաբյուջետային միջոցների նախահաշվի ծրագրային և փաստացի ցուցանիշները՝ համապատասխանաբար 594834.1 հազար դրամ և 376121.4 հազար դրամ:

2. <Ի՛ ԼՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին> Ի՛ ԼՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, տեղեկության <Այլ ծախսեր> բաժնում ներառված է Ի՛ ԼՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում պետական բյուջեից պետական տուրքի վճարումները 9635.2 հազար դրամի չափով:

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի
պետական բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ
(գործառնական դասակարգման)

հազար դրամ

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբեր և դասերի անվանումները	նախատեսված հատկացումները	ճշտված հատկացումները	կատարողա-կանը	%
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**70320000.0**	**70924469.3**	**67343806.5**	**95.0**
այդ թվում՝				
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	**7655983.8**	**8226622.9**	**7341737.8**	**89.2**
այդ թվում՝				
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	**3647544.6**	**4321012.8**	**3791171.3**	**87.7**
Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	2149719.1	2615617.0	2391228.3	91.4
Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ	915019.8	1073321.8	853250.4	79.5
Արտաքին հարաբերություններ	582805.7	632074.0	546692.6	86.5
Ընդհանուր բնույթի ծառայություններ	**316194.0**	**311778.5**	**282900.6**	**90.7**
Աշխատակազմի /կադրերի/ գծով ընդհանուր բնույթի ծառայություններ	78259.7	78259.7	68879.8	88.0
Ծրագրման և վիճակագրական ընդհանուր ծառայություններ	129134.9	129134.9	125358.4	97.1
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	108799.4	104383.9	88662.4	84.9
Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	**41829.8**	**42872.5**	**42583.7**	**99.3**
Ընդհանուր բնույթի հետազոտական աշխատանք	41829.8	42872.5	42583.7	99.3
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	**569771.0**	**570314.7**	**527726.7**	**92.5**
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ(այլ դասերին չպատկանող)	569771.0	570314.7	527726.7	92.5
Պետական պարտքի գծով գործառնություններ	**1300000.0**	**1200000.0**	**1127185.4**	**93.9**
Պետական պարտքի գծով գործառնություններ	1300000.0	1200000.0	1127185.4	93.9
Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	**1780644.4**	**1780644.4**	**1570170.1**	**88.2**
Կառավարության տարբեր մակարդակների միջև իրականացվող ընդհանուր բնույթի տրանսֆերտներ	1780644.4	1780644.4	1570170.1	88.2
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	4646400.0	4945819.4	4492855.2	90.8

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբեր և դասերի անվանումները	նախատեսված հատկացումները	ճշտված հատկացումները	կատարողա-կանը	%
այդ թվում՝				
Հասարակական կարգ և անվտանգություն	**3014676.6**	**3389676.6**	**3062409.8**	**90.3**
Ոստիկանություն	1875532.2	2225532.2	1960237.5	88.1
Ազգային անվտանգություն	1139144.4	1164144.4	1102172.3	94.7
Փրկարարծառայություն	**685271.6**	**706561.8**	**656111.5**	**92.9**
Փրկարար ծառայություն	685271.6	706561.8	656111.5	92.9
Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	**564937.8**	**468067.0**	**431047.3**	**92.1**
Դատարաններ	357056.3	357056.3	325870.6	91.3
Իրավական պաշտպանություն	207881.5	111010.7	105176.7	94.7
Դատախազություն	**381514.0**	**381514.0**	**343286.6**	**90.0**
Դատախազություն	381514.0	381514.0	343286.6	90.0
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6778672.7	6332691.6	5931326.4	93.7
այդ թվում՝				
Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	**2535360.8**	**2538201.9**	**2369934.1**	**93.4**
Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	2535360.8	2538201.9	2369934.1	93.4
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	**3121916.0**	**3122678.9**	**2957465.5**	**94.7**
Գյուղատնտեսություն	2949969.2	2949346.1	2796972.4	94.8
Անտառային տնտեսություն	171946.8	173332.8	160493.1	92.6
Վառելիք և էներգետիկա	**430000.0**	**30000.0**		
Էլեկտրաէներգիա	430000.0	30000.0		
Տրանսպորտ	**281977.6**	**282392.5**	**236508.1**	**83.8**
Օդային տրանսպորտ	281977.6	282392.5	236508.1	83.8
Այլ բնագավառներ	**315000.0**	**465000.0**	**453511.4**	**97.5**
Հյուրանոցային և հասարակական սննդի օբյեկտներ	280000.0	430000.0	425557.7	99.0
Զբոսաշրջություն	35000.0	35000.0	27953.7	79.9
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	**94418.3**	**-105581.7**	**-86092.7**	**81.5**
Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	94418.3	-105581.7	-86092.7	81.5
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	61275.7	62335.7	57429.2	92.1
այդ թվում՝				
Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	**61275.7**	**62335.7**	**57429.2**	**92.1**
Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	61275.7	62335.7	57429.2	92.1
ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	512937.8	402624.1	389116.5	96.6
այդ թվում՝				
Ջրամատակարարում	**320000.0**	**209369.8**	**205368.4**	**98.1**

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբեր և դասերի անվանումները	նախատեսված հատկացումները	ճշտված հատկացումները	կատարողա-կանը	%
Ջրամատակարարում	320000.0	209369.8	205368.4	98.1
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	**192937.8**	**193254.3**	**183748.1**	**95.1**
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	192937.8	193254.3	183748.1	95.1
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	4128086.1	4191756.1	4070765.6	97.1
այդ թվում՝				
Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ	**175934.0**	**175934.0**	**173716.8**	**98.7**
Դեղագործական ապրանքներ	161934.0	161934.0	159857.8	98.7
Բժշկական սարքեր և սարքավորումներ	14000.0	14000.0	13859.0	99.0
Արտահիվանդանոցային ծառայություններ	**1573970.8**	**1561165.8**	**1494831.0**	**95.8**
Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	834229.3	839084.3	807445.1	96.2
Մասնագիտացված բժշկական ծառայություններ	377660.6	363855.6	348384.7	95.7
Ստոմատոլոգիական ծառայություններ	89908.6	86053.6	82911.2	96.3
Պարաբժշկական ծառայություններ	272172.3	272172.3	256090.0	94.1
Հիվանդանոցային ծառայություններ	**1883101.9**	**1883101.9**	**1844571.5**	**98.0**
Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	790722.0	789580.0	781175.9	98.9
Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	452465.4	453607.4	431515.3	95.1
Բժշկական, մոր և մանկան կենտրոնների ծառայություններ	639914.5	639914.5	631880.3	98.7
Հանրային առողջապահական ծառայություններ	**248461.8**	**248461.8**	**246456.6**	**99.2**
Հանրային առողջապահական ծառայություններ	248461.8	248461.8	246456.6	99.2
Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	**246617.6**	**323092.6**	**311189.7**	**96.3**
Առողջապահական հարակից ծառայություններ և ծրագրեր	161136.8	234411.8	231871.2	98.9
Առողջապահություն (այլ դասերին չպատկանող)	85480.8	88680.8	79318.5	89.4
ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	2332541.7	2926766.5	2713397.7	92.7
այդ թվում՝				
Հանգստի և սպորտի ծառայություններ	**240012.8**	**303555.2**	**296865.9**	**97.8**
Հանգստի և սպորտի ծառայություններ	240012.8	303555.2	296865.9	97.8
Մշակութային ծառայություններ	**1105749.3**	**1513743.7**	**1316598.0**	**87.0**
Գրադարաններ	62461.8	62958.8	62064.2	98.6
Թանգարաններ և ցուցասրահներ	63886.6	63886.6	56074.0	87.8
Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	193892.3	195556.9	188303.7	96.3
Այլ մշակութային կազմակերպություններ	26541.0	26541.0	25541.0	96.2
Արվեստ	421579.0	824811.8	811755.8	98.4
Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում	337388.6	339988.6	172859.3	50.8
Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	**700455.8**	**737692.6**	**735660.2**	**99.7**

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբեր և դասերի անվանումները	նախատեսված հատկացումները	ճշտված հատկացումները	կատարողա-կանը	%
Հեռուստառադիոհաղորդումներ	573380.6	608847.4	607190.1	99.7
Հրատարակչություններ, խմբագրություններ	127075.2	128845.2	128470.1	99.7
Գիտական և հասարակական այլ ծառայություններ	**171917.0**	**207587.0**	**201333.0**	**97.0**
Երիտասարդական ծրագրեր	21917.0	23417.0	23242.0	99.3
Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ	110000.0	144170.0	138091.0	95.8
Կրոնական և հասարակական այլ ծառայություններ	40000.0	40000.0	40000.0	100.0
Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	**114406.8**	**164188.0**	**162940.6**	**99.2**
Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)	114406.8	164188.0	162940.6	99.2
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	10735778.6	10852992.6	10469718.4	96.5
այդ թվում՝				
Նախադպրոցական կրթություն	**627460.7**	**627460.7**	**535488.2**	**85.3**
Նախադպրոցական կրթություն	627460.7	627460.7	535488.2	85.3
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	**7988760.2**	**7979253.5**	**7783914.1**	**97.6**
Տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթություն	7988760.2	7979253.5	7783914.1	97.6
Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն	**433080.7**	**434763.9**	**423586.6**	**97.4**
Նախնական մասնագիտական(արհեստագործական) մասնագիտական կրթություն	172956.50	172956.5	168568.7	97.5
Միջին մասնագիտական կրթություն	260124.2	261807.4	255017.9	97.4
Բարձրագույն կրթություն	**469759.4**	**475147.6**	**451698.5**	**95.1**
Բարձրագույն մասնագիտական կրթություն	469759.4	475147.6	451698.5	95.1
Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն	**575040.2**	**590651.7**	**570100.7**	**96.5**
Արտադպրոցական դաստիարակություն	540040.2	555651.7	537589.2	96.7
Լրացուցիչ կրթություն	35000.0	35000.0	32511.5	92.9
Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	**529407.0**	**632244.8**	**593041.7**	**93.8**
Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	529407.0	632244.8	593041.7	93.8
Կրթություն (այլ դասերին չպատկանող)	**112270.4**	**113470.4**	**111888.6**	**98.6**
Կրթություն (այլ դասերին չպատկանող)	112270.4	113470.4	111888.6	98.6
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	18338724.7	17647456.7	16697023.4	94.6
այդ թվում՝				
Վատառողջություն և անաշխատունակություն	**106569.8**	**106569.8**	**102947.7**	**96.6**
Վատառողջություն	15366.0	15366.0	13615.2	88.6
Անաշխատունակություն	91203.8	91203.8	89332.5	97.9
Ծերություն	**9606237.8**	**9238237.8**	**9156909.6**	**99.1**

Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբեր և դասերի անվանումները	նախատեսված հատկացումները	ճշտված հատկացումները	կատարողա-կանը	%
Ծերություն	9606237.8	9238237.8	9156909.6	99.1
Հարազատին կորցրած անձինք	**260234.0**	**260234.0**	**200591.4**	**77.1**
Հարազատին կորցրած անձինք	260234.0	260234.0	200591.4	77.1
Ընտանիքի անդամներ և զավակներ	**5138447.7**	**5115179.7**	**4778550.3**	**93.4**
Ընտանիքի անդամներ և զավակներ	5138447.7	5115179.7	4778550.3	93.4
Գործազրկություն	**158565.6**	**158565.6**	**95678.8**	**60.3**
Գործազրկություն	158565.6	158565.6	95678.8	60.3
Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	**1223110.0**	**1223110.0**	**1036777.2**	**84.8**
Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	1223110.0	1223110.0	1036777.2	84.8
Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	**1845559.8**	**1545559.8**	**1325568.4**	**85.8**
Սոցիալական պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)	299827.0	299827.0	267933.3	89.4
Սոցիալական պաշտպանությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	1545732.8	1245732.8	1057635.1	84.9
ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ԾԱԽՍԵՐ	15129598.9	15335403.7	15180436.3	99.0
այդ թվում՝				
ԼՂՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդեր	**2000000.0**	**260205.1**	**206198.2**	**79.2**
ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդ	2000000.0	260205.1	206198.2	79.2
Այլ ծախսեր	**13129598.9**	**15075198.6**	**14974238.1**	**99.3**
Այլ ծախսեր	13129598.9	15075198.6	14974238.1	99.3

=